ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՏԵՆԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ՝ Սվետլանա Վրեժի Հակոբյան

ԱՐՏԵՆԻ 2023

Զարգացման ծրագրի բովանդակությունը

1.Ներածություն ……3

2.Դպրոցի անձնագիրը……4

3.Դպրոցի առաքելությունը…… 5-9

4.Դպրոցի նախորդ տարիների գործունեության վերլուծություն…… 9-11

5. Ուսումնական միջավայր…… 11

6.Դպրոցի ֆիզիկական միջավայրը…… 11-22

7.Նյութատեխնիկական բազան…… 23-26

8.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն…… 27-31

9.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական փաստաթղթեր…… 31-33

10.Համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ…… 33-37

11.Մանկավարժական խորհուրդ…… 37-43

12.Համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ ունեցած համագործակցություն…… 43-47

13.Աշակերտական խորհուրդ…… 47-49

14.Աշակերտական համակազմ…… 49-54

15. Օգտագործվող ՏՀՏ և այլ նորարարական տեխնոլոգիաներ…… 54-56

16. Ներառական կրթության և հավասարության ապահովում……... 57-59

17. Չափորոշչային որակին համապատասխան կրթության որակի վերլուծություն…… 60-62

18. Ծրագրի ավարտին ակնկալվող արդյունքները……63

Ներածություն

Դպրոցի զարգացման ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել կրթության զարգացման պետական քաղաքականությունը և դպրոցի զարգացման միտումները 2023-2028 թվականների ընթացքում, Հանրակրթության պետական չափորոշիչը, «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը»:

Զարգացման ծրագիրը կազմելու համար հիմք են հանդիսացել դպրոցի վերջին տարիների ներքին գնահատման հաշվետվությունները, դպրոցի և համայնքի կարիքները, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկները: Ծրագիրը նպատակ ունի նախանշել դպրոցի զարգացման ուղղություններն առաջիկա հինգ տարիների ընթացքում,որոնք կնպաստեն հայրենասեր, պետականամետ,ստեղծագործող,արժանապատիվ,ժամանակի մարտահրավերներին դիմակայող սերնդի դաստիարակմ

Դպրոցի անձնագիրը

<< Արտենիի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1954 թվականին՝ որպես Արտենիի միջնակարգ դպրոց: Դպրոցը տիպային է: 1972 թվականին դպրոցը վերակազմավորվել է Թալինի շրջանի Արտենիի ութամյա դպրոցի: 1997 թվականի հունվարի 30-ին դպրոցը վերակազմավորվել է ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի թիվ 2 միջնակարգ դպրոցի(գրանցման համար՝ 94.0042, ՀՎՀՀ՝05012441): 2003 թվականի հունվարի 21-ին վերակազմավորվել է ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի թիվ 2 միջնակարգ դպրոցի(պետռեգիստրում գրանցման համար՝ 94.210.00352, ՀՎՀՀ՝ 05012441), սակայն լիազոր մարմինը ներքին որոշմամբ դպրոցը վերակազմավորել է Արտենիի թիվ 2 հիմնական դպրոցի: 2009 թվականի հուլիսի 3-ին պետռեգիստրում դպրոցը գրանցվել է որպես <<Արտենիի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ(գրանցման համար՝ 94.210.00530,ՀՎՀՀ՝ 05012441):

Ապահովադրի ծածկագիր՝ 4180530, իրավաբանական անձի ծածկագիր՝ 10026147, էլեկտրոնային փոստ՝ arteni2@schools.am:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 2013թ դեկտեմբերի 26-ի 1425-Ա/Ք հրամանի՝ դպրոցին տրվել են լիցենզիաներ՝

1.տարրական կրթության համար՝ 100 սահմանային տեղ

2.հիմնական կրթության համար՝ 100 սահմանային տեղ:

2023 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցն ունի 103 աշակերտ՝ տարրական դպրոցում կա 57 ,իսկ հիմնական դպրոցում՝ 46 աշակերտ:

Գտնվելու վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, գյուղ Արտենի, Բաղրամյան7:

<<Արտենիի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանն ու դպրոցի կանոնադրությանը համապատասխան: Դպրոցի կանոնադրության վերջին փոփոխությունը պետռեգիստրի կողմից հաստատվել է 05.11.2021թ.:

Դպրոցն ունի կլոր կնիք և ձևաթղթեր, հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի առաքելությունը որոշելիս հաշվի են առնվել մանկավարժների, ծնողների և աշակերտների կարծիքները,մանրամասն մշակվել են դրանց իրականացման հնարավորությունները և իրականացման ռիսկերը:Հաշվի են առնվել նաև պետության կրթական քաղաքականությունը,դպրոցի և համայնքի կարիքները, դպրոցի ավանդույթները և ռեսուրսները, մանկավարժական համակազմի մասնագիտական կարողություններն ու հմտությունները:Հենվելով այս բոլոր հանգամանքների վրա՝ 2023-2028 թվականների համար դպրոցի առաքելությունը համարել.

1. Կրթության կազմակերպում՝ հանրակրթության պետական չափորոշչին և յուրաքանչյուր երեխայի կարիքներին համապատասխան:
2. Կրթական նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային գործիքների մեծածավալ ներդրում կրթական գործընթացում:
3. Սովորողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացում:
4. Ազատ մտածողությամբ,սոցիալապես շրջապատի հետ ներդաշնակ գործող,ինքնակազմակերպված անհատի ձևավորման ապահովում:
5. Ազգային և համաշխարհային մշակութային արժեքները գնահատող, մշակութային գրագիտություն և ճաշակ ունեցող անհատի ձևավորում:

6. Անգլերեն լեզվի խորացված ուսուցում:
7. Ներառական միջավայրի ընդլայնում:
8. Օժտված երեխաների համար նպաստավոր միջավայրի ստեղծում:
9. Հաստատության գործունեության կազմակերպում ներքին գնահատման չափանիշներին համապատասխան

Առաքելության իրականացման նպատակը	Խնդիրները	Անհրաժեշտ ռեսուրսները	Իրականացման գրավականները
1.Յուրաքանչյուր երեխայի համար կրթությունը կազմակերպել իր կարիքներին համապատասխան:	Կատարել մշտադիտարկում և գույքագրել բոլոր երեխաների կարիքները	1.Ֆինանսական ռեսուրսներ ա/պետական բյուջե բ/օրենքով թույլատրվող գործունեության կազմակերպում 2.Մարդկային ռեսուրսներ. տնօրեն, կրթության գծով տնօրենի տեղակալ, ԿԱԴԱՀ, դասղեկներ, հոգեբան, ուսուցչի օգնականներ	1.Իրականացնել մանկավարժե-րի ամենամյա բազմատեսակ վերապատրաստումներ ա/հերթական ատեստավոր-ման վերապատրաստում բ/խրախուսել կամավոր ատեստավորու-մը գ/ՏՀՏ վերապատրաստումներ
2.Հենվելով կրթական նոր տեխնոլոգիաների և ՏՀՏ գործիքների օգտագործման վրա՝ կրթական գործընթացը դարձնել ավելի մոտիվացված և հեշտ	Ամենօրյա ռեժիմով օգտագործել կրթական նոր տեխնոլոգիաները և գործիքները՝ դասապրոցեսը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար:	2.Նյութատեխնիկական ռեսուրսներ ա/առկա ռեսուրսներ բ/ նյութատեխնիկական բազայի շարունակական համալրում 2.Մարդկային ռեսուրսներ՝ տնօրեն, ուսումնական գծով տնօրենի տեղակալ, ԿԱԴԱՀ,	Ծախսերը նախատեսել դպրոցի տարեկան պլանում և նախահաշվում և հետևողականո-րեն իրականացնել

		մեթոդմիավորման նախագահներ, ուսուցիչներ	
3.Զարգացնել սովորողների ինքնուրույն մտածողությունը և ստեղծագործա-կան կարողություններ-ը:	1. ԿԱԴԱՀ, ուսումնական գծով տնօրենի տեղակալի, մեթոդական միավորումների նախագահների ,ուսուցիչների տարեկան աշխատանքային պլաններում ընդգրկել սովորողների ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքներ 2.Օրվա դասի պլանում նախատեսել ստեղծագործական բնույթի բաղադրիչ	ԿԱԱԴՀ Մեթոդական միավորումներ, Մանկավարժական համակազմ	1.Նախատեսել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքնե-րի տարեկան պլանում 2.Ուսուցիչների օրվա դասի պլաններում ամենօրյա ռեժիմով նախատեսել ստեղծագործական բնույթի աշխատանքներ ,զարգացնել ինքնուրույն մտածողությունը
4.Դաստիարա-կել ինքնուրույն և ազատ մտածողություն ունեցող,ժամա-նակի մարտահրավերներին պատրաստ քաղաքացիներ	1.Կազմակերպել միջոցառումներ,զրույցներ,սեմինարներ,գրքերի և ֆիլմերի քննարկումներ՝ նվիրված հայրենիքին և հայոց պետությանը 2.Պատմության և հասարակագիտության դասաժամերին,դասղեկի ժամերին պլանավորել և կազմակերպել բանավեճեր այդ թեմայով	Մանկավարժական համակազմ ԿԱԴԱՀ ԴԱԿ Դասղեկներ Հոգեբան	Խրախուսել ազատ մտածողությունը և ինքնուրույն նախաձեռնողականությունը
5.Սովորողների մոտ ձևավորել մշակութային գրագիտություն և ճաշակ:	1.Դպրոցական և դասարանային միջոցառումների պլանը կազմելիս,դասղեկի թեմատիկ պլանը կազմելիս մեծ տեղ հատկացնել	Մանկավարժական աշխատողներ ԿԱԴԱՀ ԴԱԿ Դասղեկներ Խմբակավարներ	Դասղեկի ժամերին սովորողներին ծանոթացնել ազգային և համաշխարհային մակութային արժեքներին,

	մշակութային դաստիարակությանը 2.Ստեղծել խմբակներ,որտեղ սովորողները կուսումնասիրեն հայ և համաշխարհային մշակույթը:		մշտապես այցելել թանգարաններ, թատրոններ, դասական երաժշտության համերգներ, օպերայի և բալետի թատրոն
6.Խորացնել անգլերեն լեզվի ուսուցումը՝ որպես այլ մշակույթների հետ հաղորդակցման լեզու	1.Դիմել Խաղաղության կորպուսին և ունենալ կամավոր 2.Դիմել <<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամին՝ <<Աքսես>> խմբակի ծրագիրը շարունակելու խնդրանքով	1.Անգլերեն լեզվի ուսուցչուհի 2.Խաղաղության կորպուսի կամավորներ 3.Խմբակավարներ	Փորձը ցույց է տվել,որ և կամավորների աշխատանքը, և լրացուցիչ խմբակները՝ հատկապես <<Աքսեսը>>, նպաստում են սովորողների մոտ անգլերեն լեզվի լավ իմացությանը: Այդ պատճառով հարկավոր է շարունակել աշխատանքն այդ ուղղությամբ
7.Շարունակել խելացի հարմարեցումները՝ կրթական միջավայրը ավելի ներառական դարձնելու համար:	Ստեղծել ռեսուրս-սենյակ՝ թիմի աշխատանքն ավելի հեշտացնելու և արդյունավետ դարձնելու համար:	Նրանց հետ աշխատում են հոգեբանը,ուսուցիչները,ուսուցչի օգնականները,ՏՄԱԿ-ի աշխատակիցները:	Դասասենյակներից որևէ մեկում պլաստիկ միջնորմով տարածք անջատել և հարմարեցնել
8.Մեծ ուշադրություն հատկացնել օժտված սովորողների հայտնաբերման և նրանց ընդունակությու	Մշտադիտարկման միջոցով հայտնաբերել արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողներին,գույքագրել նրանց կարիքները և կատարել	Շախմատի ուսուցիչ	Դպրոցում կա երկրորդ կարգի շախմատի որակավորում ունեցող աշակերտ : Նպաստել նրա առաջընթացին,

նները զարգացնելու ուղղությամբ:	անհրաժեշտ միջոցառումներ՝ նրանց ընդունակությունները զարգացնելու համար		կազմակերպել լրացուցիչ պարապմունք-ներ
9. Հաստատության գործունեությունը կազմակերպել ներքին գնահատման չափանիշներին համապատասխան	1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ձևավորել հանձնաժողով՝ ներքին գնահատումը իրականացնելու նպատակով: 2. Հաստատել աշխատակարգը,գործողությունների իրականացման ծրագիրը 3. Նախարարության կողմից հաստատված մեթոդական ուղեցույցին համապատասխան կազմել հաշվետվություն և ներկայացնել կառավարման խորհրդին:	Տնօրեն Ներքին գնահատման հանձնաժողով	Հաստատությունն ամեն տարի այդ գործընթացն իրականացնում է: Շարունակել գործունեությունը ներքին գնահատման չափանիշներին համապատասխան:

Դպրոցի նախորդ տարիների գործունեության վերլուծություն

Մինչև 2017 թվականը դպրոցը վերանորոգվել է մեկ անգամ՝ 1972 թվականին, երբ դպրոցը վերակազմավորվեց երկու դպրոցի՝ նրանից անջատվեց Արտենիի միջնակարգ դպրոցը և տեղափոխվեց առանձին շենք, իսկ տեղում մնաց Արտենիի ութամյա դպրոցը: Դպրոցում լավ ավանդույթ է ձևավորվել՝ խնամքով վերաբերմունք շենքի և գույքի նկատմամբ:Դրա շնորհիվ,չնայած տարիքին,շենքը լավ է պահպանվել, սակայն ուներ վերանորոգման անհրաժեշտություն:

2015 թվականից սկսած դպրոցն սկսեց համագործակցել Վորլդ Վիժն և Հայաստանի մանուկներ կազմակերպությունների հետ: Այդ համագործակցության շնորհիվ, Վորլդ Վիժն կազմակերպության օժանդակությամբ, դպրոցում բացվեց և կահավորվեց <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիան:

2017 թվականից սկսած դպրոցում սկսվեց ֆիզիկական միջավայրի բարեկարգումը: Վերանորոգվեցին մուտքի աստիճանները և կառուցվեց թեքահարթակ, փոխվեցին երկու օժանդակ դռները,բետոնապատվեց օժանդակ դռներից մինչև աստիճանահարթակ ընկած տարածությունը:Դպրոցում <<Հայաստանի մանուկներ>> բարեգործական հիմնադրամի միջոցներով ուսուցիչների,ծնողների և բարձր դասարանների աշակերտների ակտիվ մասնակցությամբ վերանորոգվեց 1 սենյակ՝ որպես ճաշարան:Գույքը հատկացրեցին <<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամը և Հայաստանում ՄԱԿ –ի գրասենյակը: ՄԱԿ-ի << Տաք սննդի ծրագրի>> միջոցներով վերանորոգվեց և կահավորվեց տնտեսական սենյակը և վերածվեց պահեստի: Վերանորոգվեց նաև վարչական սենյակը,որը շատ վատ վիճակում էր գտնվում:

Դպրոցի կաթսայատունը,որն աշխատում էր հեղուկ վառելիքով, գազաֆիկացվեց և այժմ օպտիմալ ջերմությունն ամբողջ շենքում ապահովված է:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի միջոցներով փոխվել է 18 պատուհան:

Բակի մի հատվածում <<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամի <<Առողջ ապրելակերպ>> ծրագրի շրջանակներում տեղադրվեցին խաղասարքեր և մարզասարքեր, ստեղծվեց խաղահրապարակ: 1-ից 9-րդ դասարանների սովորողները մասնակցեցին <<Առողջ ապրելակերպ>> խմբակի պարապմունքներին և սովորեցին անձնական հիգիենայի,առաջին օգնության գործողություններ:

2020 թվականից լայնածավալ վերանորոգման աշխատանքներ իրականացվեցին ՀՀ կառավարության և ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ծրագրերի միջոցներով: Փոխվեցին տանիքը,բոլոր պատուհանները,առաջին հարկի սենյակների դռները, վերանորոգվեցին միջանցքները:

2017 թվականից սկսած <<Վորլդ Վիժն>> և <<Հայաստանի մանուկներ>> կազմակերպությունները դպրոցում բացեցին խմբակներ,որոնք մեծ հետաքրքրություն առաջացրեցին երեխաների մոտ,նրանք սկսեցին սիրով հաճախել այդ խմբակներին՝ <<Խաղաղության ճանապարհ>>/<<Վորլդ Վիժն>>/, <<Մասնագիտական կողմնորոշում>>, <<Ազգագրության խմբակ>>, <<Թատերական խմբակ>> , <<Ճարտարագիտության խմբակ>>,<<Առողջ ապրելակերպ>>, <<Հետաքրքրաշարժ մաթեմատիկա>>/<<Հայաստանի մանուկներ>>/:

Անգլերեն լեզվի ուսուցումը դպրոցում ուժեղացնելու նպատակով դպրոցը համագործակցել է <<Խաղաղության կորպուս>> կազմակերպության հետ և տարբեր տարիների ընթացքում ունեցել է 4 կամավորներ,ովքեր ուսուցչի հետ միասին մասնակցել են դասին,համատեղ վարել դասը,դասերից հետո կացմակերպել լրացուցիչ պարապմունքներ: Բացի այդ դպրոցում գործել են <<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամի և Բրիտանական խորհրդի անգլերենի խմբակը, <<Աքսես>> խմբակը:Խմբակներին մասնակցած երեխաները, խմբակի

պարապմունքների ավարտի ժամանակ, վարժ անգլերենով ներկայացրեցին նախագծային աշխատանք Վարդավառի մասին:

Ուսամնական միջավայր

Ուսումնական միջավայրն իր մեջ ընդգրկում է կրթական համակարգի բոլոր բաղադրիչները:Այդ միջավայրն է կրթությունը դարձնում հարմարավետ ու հաճելի:Ծրագրի նպատակն է վերլուծել հաստատության ուսումնական միջավայրի բոլոր կողմերը,բացահայտել թերությունները և բացթողումները, գտնել դրանց լուծման ուղիները:

Ծնողների և աշակերտների հետ հանդիպման ժամանակ բոլորը նշեցին, որ բարձր են գնահատում դպրոցի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը, մանկավարժական համակազմի բարձր պատրաստվածությունը, վերջին տարիներին ամենամյա կտրվածքով իրականացվող բարեփոխումները:

Վերլուծությունը կատարել եմ ըստ առանձին բաղադրիչների:

Դպրոցի Ֆիզիկական միջավայրը

Դպրոցի ֆիզիկական միջավայրը շատ կարևոր է կրթական միջավայրը հաճելի ու հարմարավետ դարձնելու, սովորողների կրթական հետաքրքրությունները մոտիվացնելու,ավելի ապահով և պաշտպանված զգալու, ֆիզիկական և մտավոր կարողություններն ու հմտությունները զարգացնելու գործում:

Արտենիի հիմնական դպրոցը շահագործման է հանձնվել 1954 թվականին: Դպրոցն ունի 9 դասասենյակ, 1 վարչական սենյակ, 1 համակարգչային սենյակ, 1 լաբորատորիա, 1 գրադարան, 1 ՆԶՊ սենյակ, 1 պահեստ, 1 ճաշարան, 1 նիստերի դահլիճ, 2 սանհանգույց՝ տղաների և աղջիկների համար, 1 հակաճառագայթային թաքստոց:

Թեև ֆիզիկական միջավայրը 2017 թվականից հետո աստիճանաբար բարեփոխվում է, սակայն դեռ ֆիզիկական միջավայրի բարելավման կարիք կա:

Դպրոցի արհեստանոցը ուժեղ քամու պատճառով տարիներ առաջ հրդեհվել է և չի վերանորոգվել: Շենքը գտնվում է կիսաքանդ վիճակում և պետք է կամ վերանորոգվի, կամ նոր շենք կառուցվի:

Դպրոցը չունի մարզադահլիճ, բուժքրոջ սենյակ, ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար ռեսուրս- սենյակ, ուսուցչանոց, արհեստանոց, հոգեբանի սենյակ՝ ազատ սենյակներ չլինելու պատճառով:

Դպրոցում կա Արցախյան պատերազմում և Ջերմուկի պաշտպանության ժամանակ զոհված նախկին աշակերտների անվամբ անվանակոչված երեք վերանորոգված դասասենյակ,իսկ 6 դասասենյակ,գրադարանը,լաբորատորիան և համակարգչային սենյակը վերանորոգված չեն:Վերանորոգման են ենթակա նաև նիստերի դահլիճը և նկուղային հարկում գտնվող հակաճառագայթային թաքստոցը՝ հարակից սենյակների հետ: Վերջինս համայնքի միակ թաքստոցն է:



Ուսումնասիրության նպատակը

Ֆիզիկական միջավայրի ուսումնասիրությունը նպատակ ունի պարզել առկա հիմնահարցերը և գտնել համապատասխան լուծումներ:

Խնդիրները

1.Բացահայտել ֆիզիկական միջավայրի ուժեղ և թույլ կողմերը:

2.Պարզել խնդիրները լուծելու հնարավորությունները:

Դպրոցի շենքային պայմանների վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Շենքը անցել է սեյսմիկ հետազոտություն և ենթակա է շահագործման:	Վեց դասասենյակ, գրադարանը, լաբորատորիան և համակարգչային կաբինետը վերանորոգված չեն:

Շենքը մասնակիորեն վերանորոգված է:Փոխվել են տանիքը,մուտքի օժանդակ դռները,առաջին հարկի բոլոր դռները,շենքի բոլոր պատուհանները՝ բացի նկուղային հարկի պատուհաններից,միջանցքները,սանհանգույցները,վարչական սենյակը,խոհանոցը,պահեստը:	Նիստերի դահլիճը վերանորոգման կարիք ունի:
Վերանորոգված է աստիճանահարթակը և կառուցված է թեքահարթակ:	
Շենքի շահագործումը համապատասխանում է գործող նորմատիվներին:Հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործման նորմատիվները:	Նկուղային հարկը,որտեղ գտնվում է հակաճառագայթային թաքստոցը,ենթակա է վերանորոգման:
Հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ:	Դպրոցը չունի մարզադահլիճ:
Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայության մեքենաները կարող են անարգել մոտենալ շենքին:	Դպրոցը չունի արհեստանոց,ուսուցչանոց, ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար ռեսուրս-սենյակ,հոգեբանի սենյակ,բուժքրոջ սենյակ:
Դպրոցի մուտքը ապահովված է ԿԱՊԿ ունեցող սովորողների համար անհրաժեշտ թեքահարթակով:Առաջին հարկում կարելի է անվասայլակով անկաշկանդ տեղաշարժվել:	Տղաների համար նախատեսված սանհանգույցը գտնվում է երկրորդ հարկում ,որտեղ սայլակով բարձրանալու հնարավորություն չկա:Սանհանգույց ների դռները նեղ են սայլակով ներս մտնելու համար:
Տարածքը մաքուր է:Լաբորատորիայում օգտագործված նյութերի թափոնները և աղբը կանոնավոր կերպով դուրս են բերվում տարածքից:	Փոխման ենթակա են երկրորդ հարկի 6 սենյակների դռները:
Հաստատությունը կնքել է դեռատիզացիայի պայմանագիր և պայքար է կազմակերպում կրծողների և միջատների դեմ:	
Ապահովված է կապի ժամանակակից համակարգով:	Ապահովված չէ ազդարարման ժամանակակից համակարգով
Պահպանվում են սանիտարահիգիենիկ կանոնները:Աշխատողներն ըստ կարգի անցնում են բուժզննություն:	

Դպրոցն իրականացնում է անձնակազմի առողջության պահպանմանը միտված միջոցառումներ:Խստորեն պահպանվում են սանիտարահիգիենիկ նորմերը,Հայաստանի մանուկներ հիմնադրամի միջոցներով 2022 -2023 ուսումնական տարում 1-ից 9-րդ դասարաններում գործել է<< Առողջ ապրելակերպ>> խմբակ:	
Առկա են օժանդակ դռներ:	Բոլոր դռները բացվում են դեպի ներս:
Մշակված և առկա է տարհանման պլան:Այդ պլանները տեղադրված են բոլոր սենյակներում և միջանցքներում:	
Տարհանման ուղիներն ազատ են և արգելափակված չեն:	
Աշխատակազմը և սովորողները տեղյակ են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:	
Փորձնական տագնապի հայտարարման միջոցառումների ժամանակ և աշխատակազմը, և սովորողները կարողանում են գործնականում կիրառել արտակարգ իրավիճակներուում գործելու իրենց գիտելիքները:	
Կաթսայատունը գազաֆիկացվել է և ձմռանը պահպանվում է օպտիմալ ջերմություն դպրոցի ամբողջ տարածքում:	
Դպրոցում տեղադրված է ջրի բաք և առկա է շուրջօրյա ջրամատակարարում:	Ջուրը արտեզյան է և ցանկալի է ունենալ ավելի բարձրորակ ջուր:
Դպրոցում գործում է կոյուղացման համակարգ:	
Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:	Ֆիզկուլտուրա առարկայի դասաժամերն ըստ նորմերի իրականացման համար մարզադահլիճ չկա:
Դպրոցում գործում է ճաշարան,որտեղ միաժամանակ կարող են սնվել 25 սովորող:Ճաշարանում կա 4 լվացարան,որոնք ունեն ջրատաքացուցիչ և սառը ու տաք ջրի առկայությունն ապահովված է:Լվացարանների մոտ միշտ առկա են թղթե սրբիչներ և հեղուկ օճառ:Ատամնակայանի դարակներում յուրաքանչյուր սովորող ունի իր ատամի մածուկը և խոզանակը:	Դպրոցը չունի բուֆետ և միջին դասարանների սովորողները չեն կարողանում ընդմիջումների ժամանակ սնվել:
Ճաշարանում փակցված են պաստառներ առողջ սննդակարգի վերաբերյալ:Առկա է սննդի պատրաստման տեխնոլոգիական քարտ:Պահպանվում են սննդի անվտանգության նորմերը և կանոնները:	
	Դպրոցում չկա բուժսենյակ: Առաջին օգնության նյութերը գտնվում են պահեստում:

Հաստատությունն ունի հակահրդեհային լրակազմ: Վերանորոգման ժամանակ տանիքը պատվել է հրակայուն նյութերով:	
Հաստատությունում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:	
Անիվներով տեղաշարժման ենթակա իրեր չկան:	
Բաց դարակներում ծանր իրեր չկան:	
Հատակները սայթաքուն չեն,ուղեգորգեր չկան:	
Պատուհանների վրա վանդակաճաղեր չկան:	
Կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին:	Երկրորդ հարկի 6 դասասենյակի,գրադարանի և լաբորատորիայի պահարանները 1954 և 1972 թվականի արտադրության են,սակայն ամուր են և պահարանների պակասի պատճառով օգտագործվում են:
	Հաստատությունը չունի առանձին սանհանգույց ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:
Երկու հարկերում գործում են վերանորոգված սանհանգույցներ:Առաջին հարկի սանհանգույցում կա հարմարեցված բռնակ՝ ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար:Սանհանգույցներում միշտ առկա են հիգիենիկ միջոցներ/օճառ, թղթե սրբիչներ,զուգարանի թուղթ/:	Խելացի հարմարեցումներն ամբողջությամբ կազմակերպելու համար դպրոցը չունի ֆինանսական միջոցներ և ազատ սենյակներ:
Դասարաններում աշակերտների միջին խտությունը 11.4 է,իսկ դասասենյակների ընդհանուր մակերեսը՝ 423.24 : Յուրաքանչյուր աշակերտին բաժին է ընկնում 4.1 քառակուսի մետր տարածք,որն ըստ <<Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ>>-ի III մասի 9-րդ կետի պետք է կազմի 2 քառակուսի մետր:	
Դպրոցի բակում կա համատեղ խաղահրապարակ և մարզահրապարակ:	Խաղասարքերի և մարզասարքերի քանակը քիչ է և համալրման կարիք կա:
Դպրոցի տարածքը պարսպապատված է, իսկ տարածքի ներսում կա դեկորատիվ այգի և ծաղկանոց,որը խնամում են աշակերտները:	
Բակում կա վազքուղի:	Վազքուղին ամբողջությամբ

	քայքայված է և վերանորոգման կարիք ունի
Բակում կա փոքր ֆուտբոլի դաշտի համար հատկացված տարածք:	Ֆուտբոլի դաշտի ստեղծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները բացակայում են:
	Բակը և սպորտհրապարակը վերանորոգման կարիք ունեն:

Ֆիզիկական միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
Ստեղծել կրթական հարմարավետ միջավայր՝ ժամանակակից պահանջներին համապատասխան կրթություն կազմակերպելու և անհատներ դաստիարակելու համար:	1..Շարունակել դպրոցի վերանորոգման և բարեկարգման աշխատանքները:	1.Ֆինանսական հնարավորություններ ա/ Դպրոցի բյուջետային միջոցներ Ֆիզիկական միջավայրի բարելավման համար կարելի է օգտագործել բյուջեի միջոցները: Այդ միջոցները միշտ սուղ են, սակայն կարելի է վարչակատնտեսական համակարգողի և կառավարման խորհրդի անդամների հետ քննարկել նախահաշվի այլ հոդվածներից որոշ քանակությամբ գումար խնայելու և	1. Դպրոցի բյուջետային միջոցները կարող են չբավարարել 2. խնդիրների շուտափույթ լուծմանը:	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	2024-2025 թթ

		խնդիրներն այդ միջոցներով աստիճանաբար լուծելու հարցը:			
	2.Գտնել միջոցներ՝ մարզադահլիճ և արհեստանոց կառուցելու համար	բ/ դիմել լիազոր մարմնին , ներկայացնել և հիմնավորել դիմումը՝ դպրոցին սուբսիդիա տրամադրելու խնդրանքով:	2.Լիազոր մարմինը կարող է միջոցների սղության պատճառով մերժել դիմումը:	Տնօրեն Վարչական տնտեսական համակարգող	2024-2028 թթ
		գ/ Դպրոցի շրջանավարտների և ծնողական համայնքի հետ համագործակցել և փորձել գտնել հովանավորներ՝ մարզադահլիճ, արհեստանոց կամ օժանդակ մասնաշենք կառուցելու նպատակով:	3.Հնարավոր է,որ հովանավորներ չգտնվեն, իսկ ծնողները բավարար միջոցներ չունենան օգնելու համար:	Տնօրեն Տնօրեն, վարչական տնտեսական համակարգող, մանկավարժներ ծնողներ	2024-2028 թթ
		դ/Դիմել բարեգործական հիմնադրամներին՝ աջակցություն ստանալու նպատակով:	4.Բարեգործական հիմնադրամները կարող են մերժել առաջարկը:	Տնօրեն Վարչական տնտեսական համակարգող	2024-2028 թթ
		ե/ Դիմել համայնքի ղեկավարին և ավագանուն,բացատրել հիմնախնդիրը և փորձել ստանալ նրանց աջակցությունը:	Համայնքը կարող է առաջիկա տարիների համար նախատեսված անհրաժեշտ գումարը չունենալ կամ նախատեսել այլ ծախսերի	Տնօրեն Վարչական տնտեսական համակարգող	2023-2028 թթ

			համար:		
		զ/Քանի որ դպրոցի դասասենյակների մակերեսը մեծ է և մեկ աշակերտին բաժին ընկնող մակերեսը մեծ է նորմատիվային թվից, կարելի է դիմել լիազոր մարմնին,դասասենյակներում պլաստիկ միջնորմներով տարածք անջատել՝ բուժքրոջ, հոգեբանի, զարգացման կենտրոնի ստեղծման համար:Այս դեպքում կպահանջվեն քիչ ֆինանսական միջոցներ և խնդիրների մի մասը լուծում կստանա:	Լիազոր մարմինը կարող է մերժել:	Տնօրեն Վարչական տնտեսական համակարգող	2023-2028 թթ
		Է/ Խելամիտ հարմարեցումներ Քանի որ դպրոցը 2017 թվականից իրականացնում է ներառական կրթություն,այդ ժամանակվանից սկսած դպրոցը փորձել է ֆիզիկական միջավայրը հարմարեցնել ֆիզիկական և մտավոր կարիքներ ունեցող մարդկանց կարիքներին:Նորոգվել է աստիճանահարթակը ,կառուցվել է թեքահարթակ, առաջին հարկի սանհանգույցում տեղադրվել է	Ֆինանսական միջոցների և շենքի հնարավորությունների պակաս	Տնօրեն Վարչական տնտեսական համակարգող ՏՄԱԿ Լիազոր մարմին	2023-2028 թթ

		բռնակ:Սակայն խելամիտ հարմարեցումներն ամբողջությամբ իրականացնելու համար դարձյալ ֆինանսական մեծ ներդրումներ են անհրաժեշտ:			
		ը/ Դպրոցի հողամասի մակերեսը 0.83 հեկտար է կազմում,որտեղ հնարավոր է կառուցել մասնաշենք՝ մարզադահլիճ, արհեստանոց, զարգացման ռեսուրս-սենյակ,բուժքրոջ սենյակ և այլ օժանդակ սենյակներ ունենալու համար:	Ֆինանսական հնարավորություններ	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող Լիազոր մարմին ՀՀ կառավարություն	2023-2028 թթ
		թ/Դպրոցն ընդգրկված է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի վերանորոգման ենթակա դպրոցների ցանկում: Մարզադահլիճ և արհեստանոց կառուցելու համար դիմել լիազոր մարմնին՝ համապատասխան ծրագրերում ընդգրկելու համար:	Կառավարությունը կարող է մերժել:	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող Լիազոր մարմին ՀՀ կառավարություն	2024-2028 թթ
		ժ/Գտնել օրենքով թույլատրվող այլ միջոցներ:		Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	2023-2028 թթ
	3.Դպրոցի	Կարելի է պլանավորել	Պետական	Տնօրեն	2024-

	միջանցքներից մեկում պլաստիկ միջնորմով առանձնացնել տարածք՝ ուսուցչանոցի համար	նախահաշվում և իրագործել:	գույքի կառավարման կոմիտեն կարող է մերժել:	Վարչական համակարգող	2028 թթ
	Բացօթյա մարզահրապարակի ցատկատեղի ավազի թարմացում, վոլեյբոլի հրապարակի պատրաստում	Կարելի է կազմակերպել շաբաթօրյակ և աշխատանքն իրականացնել:	Վոլեյբոլի հավաքածուն առկա է և ֆինանսական ծախսեր չի պահանջում:	Տնօրեն Վարչական համակարգող Անձնակազմ	2024-2028 թթ

Ինչպես լուծել հիմնախնդիրը

Մեծ է հավանականությունը, որ նշված բոլոր ռիսկերը կգործեն: Այդ պարագայում պետք է շարունակել աշխատել բոլոր հնարավորությունները գործարկելու ուղղությամբ,իսկ դպրոցի բյուջեն պլանավորելիս առաջնահերթությունը տալ ֆիզիկական միջավայրն ավելի հարմարավետ դարձնելու խնդրին: Իհարկե, այս դեպքում խնդիրներն ամբողջությամբ լուծել հնարավոր չէ, և ֆինանսական մեծ ներդրումներ պահանջող ծրագրերը չեն իրականացվի: Սակայն դասասենյակները միջնորմներով առանձին տարածքների բաժանելու դեպքում կարելի է դպրոցում ունենալ բուժքրոջ, հոգեբանի, ԿԱՊԿ ունեցող սովորողների սենյակներ, տեխնոլոգիայի սենյակներ՝ տղաների և աղջիկների համար: Հարցը կարելի է քննարկել լիազոր մարմնի հետ և խնդիրների մի մասին այսպիսի լուծում տալ:Նշված հիմնախնիրները միանգամից լուծել հնարավոր չէ:Հարկավոր է աշխատանքները պլանավորել, կազմել ժամանակացույց և աստիճանաբար խնդիրները լուծել:Կարելի է վերանորոգման ժամանակ բոլոր դասասենյակները ձևափոխել առարկայական սենյակների:Ուսուցչանոցի հարցը կարելի է լուծել երկրորդ հարկի միջանցքում պլաստիկ միջնորմով տարածք առանձնացնելով:Այդ դեպքում մեծ ֆինանսական ներդրումներ չեն պահանջվի:

Նյութատեխնիկական բազա

Դպրոցն,ընդհանուր առմամբ, բավարար չափով ապահովված է անհրաժեշտ գույքով: Բոլոր դասասենյակներն ապահովված են սեղաններով և աթոռներով,որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում աշակերտներին առանձնացնել՝ սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան: Սակայն վերջին մի քանի տարիներին աշակերտների թիվը շարունակաբար աճում է և առաջիկա տարիներին կարող է նոր գույք ձեռք բերելու անհրաժեշտություն առաջանա: Այդ դեպքում նախօրոք անհրաժեշտ է պլանավորել և ձեռք բերել նոր սեղաններ և աթոռներ:

Դպրոցը պարբերաբար դիմել է լիազոր մարմնին և համայնքապետարանին՝ նոր գույք ձեռք բերելու հարցում օգնելու խնդրանքով:Հնարավորության դեպքում լիազոր մարմինը և համայնքապետարանը ընդառաջել և լրացուցիչ գումար են տրամադրել դրա համար: Դրա արդյունքում 2016 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետարանը դպրոցին հատկացրել է մեկ միլիոն դրամ, որի շնորհիվ դպրոցը ձեռք է բերել 15 պահարան, 5 ուսուցչական սեղան և աթոռ,10 կախիչ,1 ցուցատախտակ:Համայնքապետարանը ևս անհրաժեշտության դեպքում աջակցել է և տարբեր տարիների ընթացքում դպրոցին տրամադրել սեղաններ, աթոռներ,տարրական դասարանների համար պահարաններ, վերանորոգել է 2 սենյակ և 1-ին ու 2-րդ հարկերում ստեղծել մեկական սանհանգույց՝ տղաների և աղջիկների համար, սարքեր՝ կաթսայատան վառարանների համար:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Աշակերտական և ուսուցչական սեղանների և աթոռների քանակը բավարար է:	
Տարրական դասարաններում պահարանները փոխված են:	Միջին դասարաններում այդ պահարանները շատ հին են և փոխելու կարիք ունեն:Գրատախտակների որակը լավը չէ և փոխելու կարիք կա:
	Հին են նաև

	լաբորատորիայի պահարանները: 5 դասասենյակի , լաբորատորիայի և ՆԶՊ կաբինետի պահարանները հին են /1954 և 1972 թվականների արտադրության/ և ենթակա են փոփոխման:
Դպրոցում կա 3 գործող համակարգիչ, 1 էլեկտրոնային գրատախտակ, 1 նոթբուք, 3 պրոյեկտոր, 2 տպիչ սարք:	Համակարգիչների քանակը քիչ է: Մեկ համակարգիչ տեղադրված է վարչական սենյակում և մշտապես զբաղված է: Ուսուցիչներն օգտվում են երկու համակարգիչներից, որը դժվարություններ է առաջացնում ժամանակը ճիշտ պլանավորելու հարցում:
Լաբորատորիայում առկա են<<Քիմիա>>,<<Ֆիզիկա>>,<<Կենսաբանություն>>,<<Աշխարհագրություն>> առարկաների պաստառներ,լաբորատոր գույք(կոլբա,սպիրտայրոց,կշեռք,ապակե ձողեր,քիմիական նյութեր,ատվուդի մեքենա, իմպուլսի պահպանման օրենքը բնորոշող սարք,օպտոէլեկտրոնային միլիվայրկյանաչափ կենսաչափ,մաթեմատիկական ճոճանակ):	Լաբորատորիան վերանորոգման և նոր նյութերով հագեցնելու կարիք ունի:Անհրաժեշտ է ԲՏՃ բոլոր առարկաների համար ստեղծել առանձին լաբորատորիաներ կամ կաբինետներ:
Ռազմագիտության սենյակում կան առարկայական պաստառներ,հակագազեր:	Սենյակը վերանորոգման կարիք ունի:Դպրոցը չունի զենքի սենյակ:
	Համակարգիչների սենյակում կա 1 համակարգիչ և 1

	բազմաֆունկցիոնալ տպիչ սարք:Նույն սենյակում է գտնվում նաև Արմաթ լաբորատորիան:
Գրադարանում կա 3021 կտոր գեղարվեստական գիրք,մեթոդական գրականություն,ամսագրեր, 1 համակարգիչ,	Համակարգիչների քանակը քիչ է:Գեղարվեստական գրականության պաշարը մշտապես պետք է համալրվի:
	Նիստերի դահլիճը վերանորոգված չէ,ունի վերանորոգման և գույքով համալրելու կարիք:
Ճաշարանը վերանորոգված է,ունի խոհանոցի հատված և ատամնակայան,որտեղ երեխաները լվացվում և մաքրում են ատամները:Առկա է 4 սեղան,24 աթոռ,սառնարան,ջրատաքացուցիչ,սպասք լվանալու պահարան՝ 2 բաժիններով,անհրաժեշտ սպասք,ատամնակայան՝ 4 լվացարանով:Տեղադրված է առանձին ջրատաքացուցիչ՝ լվացարանների համար:	Լվացարանների համար հատկացված ջրատաքացուցիչը թույլ հզորություն ունի և չի կարողանում ջուրը տաքացնել պահանջվող ջերմությամբ:
Պահեստը վերանորոգված է:Ունի սառնարան և երկու դարակաշար՝ սննդամթերքի պահպանության համար:Այստեղ են գտնվում նաև առաջին օգնության համար անհրաժեշտ նյութերը:	
Վարչական սենյակը վերանորոգված է:Այստեղ տեղադրված են 3 պահարան,4 սեղան,աթոռներ,1 համակարգիչ, 1 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք,1 նոթբուք:	

Նյութատեխնիկական բազան բարելավելուն ուղղված միջոցառումներ

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
Համալրել առկա նյութատեխնիկական բազան	1.Բյուջեն պլանավորել իս հաշվի առնել կարիքները	Դիմել լիազոր մարմնին, համայնքապետարանին,հիմնադրամներին՝ միջոցներ	Բավարար միջոցներ չլինելու պատճառով լիազոր	Տնօրեն Վարչական տնտեսական համակ	2024-2028

անհրաժեշտ նյութերով, սարքերով և գործիքներով:	և համապատասխան հոդվածներում ներառել ծախսերը:	հատկացնելու առաջարկությամբ	մարմինը, համայնքապետարանը և հիմնադրամները կարողեմ մերժել առաջարկը:	արգող	
	2.Գտնել հովանավորներ,դիմել հիմնադրամներին՝ դպրոցին անհրաժեշտ գույք ձեռք բերելու համար:	Գտնել օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ		Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	2023-2028
	3.Գտնել ֆինանսավորման նոր աղբյուրներ:			Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	2023-2028

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը իրականացվում է թափանցիկ և ժողովրդավարական եղանակով:Դպրոցի բյուջեն քննարկվում է մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներում, որից հետո ներկայացվում է կառավարման խորհրդի հաստատմանը: Նախահաշիվը և եռամսյակային հավետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում:

Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.

Դպրոցի բյուջեի ծախսի ուղղությունները

h/h	Հոդվածի տնտեսագիտական անվանումը	Ծախսը առ 01.10.2023	Ընդամենը
1.	Աշխատավարձ	26240.1	43640.1
2.	Էլեկտրաէներգիա	255.3	405.3
3.	Գազ	1200.0	2000.0
4.	Աղբահանություն	8.1	20.0
5.	Տրանսպորտային ծառայություններ	8.4	22.6
6.	Ներքին գործուղումներ	40.0	80.0
7.	Համակարգչային ծառայություններ	61.5	91.5
8.	Տեղեկատվական ծառայություններ	40.0	80.0
9.	Մասնագիտական ծառայություններ	469.3	700.0
10.	Վերապատրաստումներ		
11.	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	75.9	100.0
12.	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	6.0	100.0
13.	Գրասենյակային նյութեր	93.7	200.0
14.	Սնունդ	745.6	1400.0
15.	Հատուկ նպատակային նյութեր	192.5	250.0
16.	Դասագրքերի վարձավճար	0	27.0
17.	Պարտադիր վճարներ	6.0	6.0
18.	Շենքերի և շինությունների վերանորոգում	461.0	461.0
19.	Վարչական սարքավորումներ	750.0	750.0
20.	Այլ մեքենաներ և սարքավորումներ	990.0	990.0

Դպրոցի բյուջեի հիմնական ուղղությունը կազմում է աշխատավարձը:Երկրորդ ուղղությունը գազի և էլեկտրաէներգիայի սպառումն է:

Մասնագիտական ծառայություններն իրենց մեջ ընդգրկում են գնումների համակարգողի և համակարգիչների սպասարկման ծառայությունները:

<<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում>> հոդվածով նախատեսված 75.900 դրամով դպրոցը ձեռք է բերել ջեռուցման համակարգի վերանորոգման համար անհրաժեշտ ապրանքներ:

<< Շենքերի և շինությունների վերանորոգում>> հոդվածով նախատեսված 461000 դրամը վճարվել է <<Սաժե>> ընկերությանը՝ միջանցքների վերանորոգման ավարտից հետո:

<<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված 750000 դրամով դպրոցը ձեռք է բերել էլեկտրոնային գրատախտակ և պրոյեկտոր:

<< Այլ մեքենաներ և սարքավորումներ>> հոդվածով նախատեսված 990000 դրամով դպրոցը ձեռք է բերել հնոցի վառարան:

<<Սնունդ>> հոդվածով նախատեսված գումարը ծախսվում է տարրական դասարաններում սովորող 57 աշակերտներին տաք սնունդ տրամադրելու համար:

2019 թվականից սկսած մանկավարժական աշխատողների դրույքաչափերը բարձրացել են:

2018-2019 ուսումնական տարում սահմանված են եղել հետևյալ դրույքաչափերը՝

Մինչև մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների համար՝ 89000 դրամ:

Մեկից մինչև 15 տարվա աշխատանքային ստաժ ունեցող մանկավարժների համար՝ 93000 դրամ:

Տասնհինգ տարուց բարձր աշխատանքային ստաժ ունեցողների համար՝ 95000 դրամ:

2019-2020 ուսումնական տարում դրույքաչափերը փոխվել են հետևյալ համամասնությամբ՝

Մինչև մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների համար՝ 97900 դրամ:

Մեկից մինչև 15 տարվա աշխատանքային ստաժ ունեցող մանկավարժների համար՝ 102300 դրամ:

Տասնհինգ տարուց բարձր աշխատանքային ստաժ ունեցողների համար՝ 104500 դրամ:

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023-2024 ուսումնական տարին դրույքաչափերը գործել են հետևյալ համամասնությամբ՝

Մինչև մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների համար՝ 108800 դրամ:

Մեկից մինչև 15 տարվա աշխատանքային ստաժ ունեցող մանկավարժների համար՝ 110000 դրամ:

Տասնհինգ տարուց բարձր աշխատանքային ստաժ ունեցողների համար՝ 111200 դրամ:

2023-2024 ուսումնական տարվա սեպտեմբերի մեկից գործում են հետևյալ դրույքաչափերը.

Մինչև մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների համար՝ 119800 դրամ:

Մեկից մինչև 15 տարվա աշխատանքային ստաժ ունեցող մանկավարժների համար՝ 120000 դրամ:

Տասնհինգ տարուց բարձր աշխատանքային ստաժ ունեցողների համար՝ 120200 դրամ:

Դպրոցի երկու ուսուցիչ հաղթահարել է կամավոր ատեստավորման նվազագույն շեմը: Դպրոցում տարակարգ ունեցող ուսուցիչ չկա:

2023 թվականի հունվարից բարձրացել են նաև ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձերը՝ 87975 դրամից դառնալով 95625 դրամ,իսկ 1974 թվականից հետո ծնվածների համար՝ 104000 դրամ:

2024 թվականի հունվարից դպրոցներն անցնում են նոր հաշվապահական ծրագրով աշխատանքային ռեժիմի:Այդ աշխատանքները ճիշտ և պատշաճ մակարդակով կատարելու համար վարչատնտեսական համակարգողի և հաշվապահի վերապատրաստման համար հարկավոր է նախահաշվում նախատեսել ֆինանսական միջոցներ:

Դպրոցի ամբողջ գույքը հաշվառված է և յուրաքանչյուր գնումից հետո հաշվառվում է համապատասխան գրանցամատյանում:Ամեն տարի տեղի է ունենում գույքի հաշվառում:2017 թվականին դպրոցում մասնագետի կողմից անցկացվել է գույքի վերագնահատում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ամեն ամիս պետբյուջեից ստացվող	Ծնողների կողմից ներդրումների

կայուն փոխանցումներ	անբավարար լինելը:
Պետբյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ֆինանսական միջոցներ	Համայնքի կողմից ներդրումների բացակայությունը:
Բյուջեի նպատակային օգտագործում	
Աշխատավարձերի կայուն վճարումներ	
«Հայաստանի մանուկներ»հիմնադրամի կողմից կատարված ներդրումներ	
Ծախսված միջոցները,որոնք ուղղվել են կրթական միջավայրի բարելավմանը,էլեկտրոնային սարքերի ,մարզասարքերի և խաղասարքերի,գրասենյակային և այլ նյութերի ձեռքբերմանը,նպաստել են աշակերտների սովորելու մոտիվացիայի ուժեղացմանը:	

Դպրոցի ֆինանսատնտեսական կառավարումն ուժեղացնելուն նպատակաուղղված գործողություններ

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
Բարելավել դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	1.Կազմակերպել տնօրենի,վարչատնտեսական համակարգողի և հաշվապահի վերապատրաստում:	1.Նախահաշվում նախատեսել այդ վերապատրաստմանն ուղղվող ծախսերը:	Բյուջեի ֆինանսական միջոցների անբավարար լինելը:	Տնօրեն, Վարչատնտեսական համակարգող:	2023-2024 թթ
	2.Վերապատրաստումից հետո համապատասխան սեմինարներ անցկացնել խորհրդի անդամների հետ և	2.Բյուջեի միջոցների անբավարարության դեպքում վերապատրաստման գործուղել նրանցից մեկին:Վերջինս վերադառնալուց հետո կվերապատրաստի մյուսներին:	Ֆինանսական միջոցներ պետք չեն::	Տնօրեն, Վարչատնտեսական համակարգող:	2023-2024 թթ

	նրանց ևս տեղեկացնել կատարված փոփոխությունների:				

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերն են Կրթության մասին օրենքը, Հանրակրթության մասին օրենքը, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, դպրոցի կանոնադրությունը, այլ օրինակելի իրավական ակտեր: Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է նաև ներքին իրավական ակտերով և նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցում գործում են ներքին կարգապահական կանոններ, իրականացվում է ներքին վերահսկողություն,կազմված է աշխատանքային պլան: Փաստաթղթերը ունեն և թղթային, և էլեկտրոնային ձևաչափեր,սակայն աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնային ձևաչափի:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատվել են դպրոցում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը.

1.Էլեկտրոնային դասամատյաններ

2.Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ

3.Սովորողի անձնական էլեկտրոնային գործ

4.Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան

5. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ

7. Էլեկտրոնային հաստիքացուցակ

8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ

9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.

10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան

11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով

12. Դասալսումների արդյունքների արձանագրություն

13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակ

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի գործածության բարելավմանն ուղղված միջոցառումներ

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
Զարգացնել դպրոցի վարչական աշխատողների կարողությունները պարտադիր գործածության ենթակա փաստաթղթերի ստեղծման և վարման համար	1.Ապահովել հաստատությունում գործածվող փաստաթղթերի համապատասխանությունը օրինակելի փաստաթղթերի ձևաչափին	ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված փաստաթղթերը դպրոցում առկա են և գործածվում են: Աշխատանքը կատարելու համար ստեղծել հանձնաժողով,որոշել ժամկետները: Դրանք համեմատել օրինակելի փաստաթղթերի հետ և անհրաժեշտության դեպքում կատարել ուղղումներ:	Ռիսկեր չկան,ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, կառավարման մարմին ,խորհրդակցական մարմիններ	2023-2024 թթ
	2.Համագործակցել այլ դպրոցների	Օգտվել այլ դպրոցների փորձից:	Ռիսկեր չկան,ֆինանսական	Տնօրեն, վարչատնտես	2023-2024 թթ

	հետ և իմանալ նրանց փորձը այդ ոլորտում:		միջոցներ չեն պահանջվում:	ական համակարգող	
	3.Մանկավարժական խորհրդի անդամներին ծանոթացնել դպրոցի հիմնարար փաստաթղթերին:	Կազմակերպել սեմինարներ մանկավարժների համար:	Ռիսկեր չկան, ֆինանսական ծախսեր չեն պահանջվում:	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2023-2024 թթ
	4.Զարգացնել մեթոդական միավորումների աշխատանքի կազմակերպման հնարավորությունները:	Կազմակերպել սեմինարներ մեթոդական միավորումների նախագահների համար:	Ռիսկեր չկան, ֆինանսական ծախսեր չեն պահանջվում:	Ռիսկեր չկան, ֆինանսական ծախսեր չեն պահանջվում:	2023-2024 թթ

Համագործակցությունը կառավարման, խորհրդակցական մարմինների հետ

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Դպրոցի կառավարման մարմիններն են՝

1.Հիմնադիրը

2.Լիազորված մարմինը/Արագածոտնի մարզպետարանը/

3.Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը

4. Ըստ ՀՀ օրենսդրության դպրոցի ընթացիկ գործունեությունը ղեկավարում են գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրենը և վարչատնտեսական համակարգողը:

Համակարգողի պաշտոնը նոր է ներդրվում դպրոցի կառավարման գործունեության մեջ:

Դպրոցը սերտորեն համագործակցում է կառավարման բոլոր մարմինների հետ:

Արտենիի հիմնական դպրոցի կառավարման խորհուրդն ունի 9 անդամ:

Կառավարման խորհուրդը

1.Քննարկել է դպրոցի զարգացման ծրագիրը:

2.Ամեն տարեսկզբի առաջին նիստում հավանության է արժանացրել զարգացման ծրագրի այդ ուսումնական տարվա ուղղությունները, հետևել դրանց իրագործմանը, լսել տարեվերջյան հաշվետվությունը և կատարել եզրակացություններ:

3.Խորհուրդը քննարկել է տնօրենի ներկայացրած բյուջեի նախագիծը, հաստիքացուցակը, տարիֆիկացիան և հաստատել այն:

4.Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը:

5.Հաստատել է ներքին կարգապահական կանոնները:

6.Քննարկել է ուսումնամանկավարժական և աջակցող թիմի հաշվետվությունները:

7.Քննարկել է ներքին և արտաքին գնահատման արդյունքները:

8.Հաստատել ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը

9.Իրականացրել է օրենսդրությամբ կամ լիազոր մարմնի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

Կառավարման խորհրդի հերթական նիստերը գումարվել են երեք ամիսը մեկ անգամ:Ուսուցչի թափուր տեղ առաջանալու կամ այլ անհրաժեշտ հարցեր քննարկելու դեպքում գումարվել են արտահերթ նիստեր: Նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել է տնօրենը:

Տնօրենը

- կազմել և հաստատման է ներկայացրել տարիֆիկացիոն ցուցակը, հաստիքացուցակը,նախահաշիվը
- կազմել է հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ֆինանսավորման հայտը,ֆինանսատնտեսական հաշվետվությունը ,ներկայացրել խորհրդակցական մարմիններին և կառավարման խորհրդին
- մանկավարժական խորհրդի հաստատմանն է ներկայացրել ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը
- խորհրդակցական մարմիններին է ներկայացրել ներքին գնահատման հաշվետվությունը

- մանկավարժական խորհրդի հաստատմանն է ներկայացրել դասաբաշխումը, ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և ներկայացրել կառավարման խորհրդին
- հաստատել է փոխտնօրենի,մեթոդական միավորումների նախագահների,դասղեկների,ուսուցիչների,գրադարանավարի,աջակցող թիմի տարեկան հաշվետվությունները, ներքին կարգապահական կանոնները:

Ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Խորհրդի անդամների և դպրոցի միջև ձևավորվել է աշխատանքային ջերմ մթնոլորտ:	Խորհրդի անդամներն աշխատում են տարբեր ոլորտներում և երբեմն ոմանք չեն կարողանում մասնակցել նիստերին:
Խորհրդի անդամները քննարկումներին ակտիվորեն են մասնակցում և կողմ են արտահայտվում դպրոցի առաջարկներին:	Սեփական նախաձեռնություններով և առաջարկներով հանդես չեն գալիս:
	Կառավարման խորհրդի անդամները ամբողջությամբ չեն պատկերացնում դպրոցի հիմնախնդիրները:
Տնօրենը կազմել և հաստատման է ներկայացրել տարիֆիկացիոն ցուցակը, հաստիքացուցակը,նախահաշիվը	Խորհրդի անդամները բավարարվել են լսելով և հավանություն տալով,առաջարկություններով հանդես չեն եկել
Տնօրենը ներկայացրել է հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ֆինանսավորման հայտը, ֆինանսատնտեսական հաշվետվությունը, ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը, ներքին գնահատման հաշվետվությունը	
Խորհրդի հավանությանն է ներկայացրել ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը,ներքին կարգապահական կանոնները	
Իրականացվել է բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործումը,ուսումնանյութական բազայի հաշվառումը,պահպանումը և համալրումը	

Կազմվել է ներպրոցական վերահսկողության պլան և իրականացվում է վերահսկողություն բոլոր աշխատանքների նկատմամբ:	

Կառավարման խորհրդի հետ աշխատանքներն արդյունավետ դարձնելու միջոցառումներ

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
Վարչատնտեսական համակարգողի հետ միասին փորձել ակտիվացնել կառավարման խորհրդի աշխատանքը:	1.Կազմել ժամանակացույց և այն նախօրոք հարմարեցնել խորհրդի անդամների աշխատանքային գրաֆիկին՝նրանց բացակայությունները պակասեցնելու համար:	Աշխատանքը կազմակերպել վարչատնտեսական համակարգողի հետ միասին, նախապես համաձայնեցնելով խորհրդի անդամների հետ:Այդ նպատակով կազմել ժամանակացույց և պատասխանատուներ սահմանել տնօրենին և համակարգողին:	Կարող են հրաժարվել լրացուցիչ մասնակցությունից:	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	2023-2028 թթ
	2.Խորհրդի անդամների համար կազմակերպել կարճատև սեմինարներ՝ իրենց իրավունքներն ու պարտականությունները ավելի լավ	Կազմել ժամանակացույց և համաձայնեցնել խորհրի անդամների հետ:	Կարող են ակտիվություն չցուցաբերել:	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	2023-2028 թթ

	պատկերացնելու և դպրոցի կարիքների լուծմանն ավելի ակտիվորեն աջակցելու նպատակով:				

Մանկավարժական խորհուրդ

Դպրոցում աշխատում է 27 մանկավարժ,որոնցից բարձրագույն կրթություն ունի 24-ը(88.7 %): Ուսուցիչներից երկուսն ունեն միջին մասնագիտական կրթություն,մասնակցել են կամավոր ատեստավորմանը և ցուցաբերել համապատասխանաբար 62.9 և 65.7 տոկոս արդյունք:Մեկ ուսուցիչ ունի միջնակարգ կրթություն,մասնակցել է կամավոր ատեստավորմանը և ցուցաբերել է 51.7 տոկոս արդյունք:Նա երկրորդ անգամ էր մասնակցում կամավոր ատեստավորմանը:նախորդ ատեստավորման ժամանակ ցուցաբերել էր 21 տոկոս արդյունք:

Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների քանակը 26 է (96%) : Մեկ ուսուցիչ ունի ֆիզիկոսի որակավորում,սակայն ավելի,քան 25 տարի աշխատում է որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

Նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը՝ 15 ուսուցիչ (62. 5%):

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հաստատության տնօրենությունը աշխատում է ժողովրդավարական ոճով, ժամանակին մանկավարժներին տեղյակ է պահում ԿԳՄՍ նախարարի հրամանների,լիազոր մարմնի որոշումների և կարգադրությունների մասին:	

Մանկավարժները մշտապես ծնողներին տեղեկացնում են սովորողների առաջադիմության,վարքագծի,ուսումնադաստիարակչակ ան խնդիրների մասին:	
Ծնողները վստահում են մանկավարժներին և համագործակցում նրանց հետ,հաճախ դիմում առաջարկություններով	
Դպրոցում աշխատանքները կազմակերպվում են համագործակցային,թիմային,փոխադարձ վստահության մթնոլորտում:	
24 ուսուցիչ ունի բարձրագույն կրթություն:	Եզդիերեն լեզվի խմբակավարն ունի միջնակարգ կրթություն և կամավոր ատեստավորման ժամանակ չի հավաքել անհրաժեշտ թվով միավորներ:
Խորհրդում մշտապես քննարկվել են օրենսդրությամբ,մանկավարժական խորհրդի լիազորություններով սահմանված հարցեր:	Ծնողները գտնում են, որ դպրոցում քիչ են կազմակերպվում անգլերեն և ռուսաց լեզուներով միջոցառումներ:
Միջին մասնագիտական կրթություն ունեցող երկու ուսուցիչներ մասնակցել են կամավոր ատեստավորմանը և հաղթահարել անցողիկ շեմը:	
Ուսուցիչների միջին տարիքը 48 է:	
Վերջին երեք տարվա ընթացքում պարտադիր վերապատրաստում է անցել 15 ուսուցիչ:	Որպես վերապատրաստող ուսուցիչ վերապատրաստված և դասընթաց վարող ուսուցիչ չկա:
Դպրոցում կա մարզում լավագույն ճանաչված 1 ուսուցիչ:	Դպրոցում չկա տարակարգ ունեցող ուսուցիչ:
Կանոնավոր կերպով ,երկու ամիսը մեկ անգամ, տեղի են ունեցել մանկավորժական խորհրդի նիստեր,իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև արտահերթ նիստեր:	Հեղինակային կամ գիտամանկավարժակա ն աշխատություններ հրապարակած ուսուցիչներ չկան:
Դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:	
Հաջողությամբ են իրականացվել կրթական ծրագրերը:	
Աջակցող թիմի աշխատանքը եղել է արդյունավետ:ԿԱՊԿ	Դպրոցի աջակցող թիմի

ունեցող սովորողների մոտ նկատվել է առաջընթաց:Նրանց մեծ մասն ավարտել է դպրոցը:Մեկ ԿԱՊԿ ունեցող աշակերտ ընդունվել է Երևանի Էրեբունու բժշկական քոլեջ:	կազմը կրճատվել է,պահպանվել է հոգեբանի և ուսուցչի օգնականի հաստիքը:
Բոլոր ուսուցիչները տիրապետում և դասավանդում են աշակերտակենտրոն,ինտերակտիվ մեթոդներով:	Աշխատանքի այս ոճը մշտապես կատարելագործման կարիք ունի:
Բոլոր ուսուցիչները կիրառում են ՏՀՏ տեխնոլոգիաներ:	Այս գործիքակազմին լավ տիրապետելու համար պետք է մշտապես կատարելագործել գիտելիքները և սերտորեն համագործակցել միմյանց հետ:
Ամեն ուսումնական տարվա սկզբում կազմվել են առարկայական թեմատիկ պլանները, մեթոդական միավորումների պլանները,դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը,տնօրենի տեղակալների աշխատանքային պլանները,ԴԱԿ աշխատանքային պլանը,մանկավարժական մյուս աշխատողների աշխատանքային պլանները:	ՏՀՏ գործիքների կիրառմամբ տնային հանձնարարություններ տվող ուսուցիչների թիվը փոքր է:Հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա:
Ուսումնական տարվա ընթացքում երկու անգամ բոլոր մանկավարժական աշխատողները ներկայացրել են հաշվետվություն կատարած աշխատանքների վերաբերյալ:	Քիչ է այն գործնական պարապմունքների թիվը,որոնք անցկացվում են դրսում:
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համագործակցող և մրցույթներին մասնակցած 1 ուսուցիչ ցուցաբերել է բարձր արդյունք (3-րդ մրցանակային տեղ):	
Հիվանդությունների կամ այլ պատճառներով պարբերաբար բացակայող ուսուցիչներ չկան:	
Հարցումների արդյունքում պարզվել է,որ շահառու խմբերը դրական կարծիք են հայտնել դասավանդող ուսուցիչների մասին:	
Ամեն տարի կազմվել և թարմեցվել են դպրոցի ՔՊ և ԱՌՆ պլանները:	Դպրոցը չունի զենքի սենյակ:
Ամեն տարի դպրոցում կազմակերպվել է փորձնական տագնապ ՔՊ շտաբի պետի և տնօրինության կողմից:Կազմակերպվել է նաև փորձնական տագնապ ԱԻՆ –ի կողմից:	Սենյակների անբավարարության պատճառով գրադարանը նաև ուսուցչանոցի դեր է կատարում:
Դպրոցի գրադարանում ամեն տարի կազմակերպվում են	Գրադարանը չունի

ցերեկույթներ՝ նվիրված հայ գրողների կյանքին ու գործունեությանը:	էլեկտրոնայինն գրատախտակ:

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների զարգացում

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հաստատությունում աշխատում են բազմավաստակ,իրենց մասնագիտությանը լավ տիրապետող ուսուցիչներ:	Նրանց աշխատանքը քիչ է խրախուսվել:
Ուսուցիչները պարբերաբար վերապատրաստվել են տարբեր կազմակերպություններում,բարձրացրել իրենց որակավորումը:	Վերապատրաստման գնալու գործընթացը միշտ նախաձեռնել է տնօրենությունը:Այդ հարցում ուսուցիչները նախաձեռնող չեն եղել:
Յուրաքանչյուր վերապատրաստումից հետո ուսուցիչները ձեռք են բերել նոր գիտելիքներ և կարողություններ ու հմտություններ, որը նպաստել է դասն ավելի արդյունավետ ու կազմակերպելուն:	Վերապատրաստումներին որոշ ուսուցիչներ վերաբերվել են թերահավատորեն:
Մեթոդական միավորումներում հաճախ քննարկվել են դասի կազմակերպման մասին տարբեր մոտեցումները,կիսվել են իրեց փորձով:	Քիչ են եղել զեկուցումները:
Դասալսումներից հետո կազմակերպվել են քննարկումներ,եղել են առաջարկներ:	Երբեմն որևէ մեթոդի կամ հնարի մասին կարծիքները բախվել են և եղել են հակասական:
Ուսուցիչները պրպտել և գտել են լրացուցիչ գրականություն,էլեկտրոնային նյութեր,որն օգտագործել են դասապրոցեսում:	Ավելի տարեց ուսուցիչների մոտ համակարգչային գրագիտությունը ավելի թույլ է:
Շարունակական վերապատրաստումները համալրել են ուսուցիչների գիտելիքների բազան:	Երիտասարդ ուսուցիչների մոտ դասալսման մոտիվացիան փոքր է:
Աշխատանքի ընթացքում պրպտել և ինքնուրույն ուղիներ են գտել սովորողներին մոտիվացնելու ուղղությամբ:	Ուսուցիչները քիչ են արժանացել խրախուսանքի:Լավ աշխատանքը գնահատվել է որպես ամենօրյա պարտականություն:

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ

Դպրոցի շարունակական զարգացման մեջ ուսուցիչների դերի մեծացում:	1.Շարունակ խթանել ուսուցիչների մասնագիտական գիտելիքների հարստացումն ու հմտությունների կատարելագործումը:	Դպրոցի մանկավարժական համակազմը բարձր մասնագիտական գիտելիքներ ունեցող հմուտ մանկավարժներից է կազմված:	Այս հարցում ռիսկերը մեծ չեն:Միայն ՏՀՏ գործիքակազմն է որոշ դժվարություններ առաջացնում,որը լիովին հաղթահարելի է:	Տնօրեն Ուսումնական գծով տնօրենի տեղակալ ԿԴԱՀ	Ամեն տարի պարբերաբար
Ստեղծել ուսուցիչների աշխատանքի խրախուսման համակարգ	1.Յուրաքանչյուր ձեռքբերում արժևորել այնպես,որ ուսուցիչը դառնա պրպտող: 2.Խրախուսման տարբեր ձևեր կիրառել՝ պարգևատրել պատվոգրով, դրամական խրախուսանքի ներկայացնել:	Եթե ֆինանսական բաղադրիչը կարող է չբավարարել,ապա պատվոգրի հանձնումը ֆինանսական ծախսեր չի պահանջում:	Ռիսկեր չկան	Տնօրեն, ուսումնական գծով տնօրենի տեղակալ,ԿԱԴԱՀ	Մշտապես
	Պարգևատրման համար ներգրավել ծնողներին,կատարել անանուն թերթիկներով հարցումներ: Հարցումներ իրականացն	Վերլուծել հարցումների արդյունքները և կատարել եզրահանգումներ	Ռիսկեր չկան	Տնօրեն, ուսումնական գծով տնօրենի տեղակալ,ԿԱԴԱՀ	Մշտապես

	ել աշակերտնե րի շրջանում:				
	2.Խթանել ՏՀՏ գործիքների կիրառումը դասապրոցե սում:	Պարբերաբար անցկացվող վերապատրաստումն երը	Նախօրոք պլանավորե լ,կազմել ժամանակա ցույց և ըստ դրա իրականաց նել:	Տնօրեն Ուսումն ական գծով տնօրեն ի տեղակ ալ ԿԱԴԱՀ օպերա տոր	Ամեն տար ի պար բերա բար
	Յուրաքանչյո ւր լավ կատարված ախատանքի համար խրախուսել ուսուցիչների ն և մանկավարժ ական աշխատողնե րին պատվոգրեր ով,շնորհակ ալագրերով: Դա կմոտիվացնի և կխրախուսի ուսուցիչներ ին՝ մշտապես ինքնակրթվել և ինքնակատա ելագործվել:	ԿՁՆԱԿ հիմնադրամի կազմակերպած առցանց սեմինարներն ու խորհրդատվությունն երը	Մշտապես հետևել հիմնադրամ ի էջին,գրանց վել և մասնակցել սեմինարնե րին:	Տնօրեն, Ուսումն ական գծով տնօրեն ի տեղակ ալ, ԿԱԴԱՀ	Ամեն տար ի պար բերա բար
		Կրթական տարբեր կայքերում տեղադրված լայնածավալ պաշարները հնարավորություն են	Օգտվել այդ պաշարներ ից և մշտապես թարմեցնել ուսումնակ	Ուսումն ական գծով տնօրեն ի տեղակ	Ամեն տար ի պար բերա բար

		տալիս մշտապես կատարելագործվել և դասապրոցեսն ավելի արդյունավետ դարձնել:	ան նյութերը:	ալ, ԿԱԴԱՀ, մեթոդմ իավորո ւմների նախագ ահներ	
		Դպրոցի ուսումնական պլանի անհատական բաղադրիչը ճիշտ բաշխելու շնորհիվ երկարօրյա պարապմունքների,խ մբակների,նախագծայ ին աշխատանքների ճիշտ կազմակերպումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:	Մեթոդական միավորում ներում կազմակեր պել քննարկում ներ և մեթոդակա ն օգնություն ցուցաբերել երիտասար ուսուցիչներ ին:		Ամեն տար ի պար բերա բար

Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Արտենիի հիմնական դպրոցն իր գործունեության ընթացքում միշտ սերտորեն համագործակցել է տեղական ինքնակառավարման մարմինների,ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ:

Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շնորհիվ,երբ դպրոցի բյուջեն սուղ է եղել և բյուջեի միջոցներով հնարավոր չի եղել գույք ձեռք բերել,Արտենիի գյուղապետարանը դպրոցին նվիրել է սեղան-նստարաններ, տարրական դասարանների դասասենյակներին նվիրել է պահարաններ,ստեղծել է 2 սանհանգույց՝ աղջիկների և տղաների համար, դպրոցի բակում տեղադրել է ցայտաղբյուր:Հնոցի սարքավորումները երբ շարքից դուրս են եկել,գյուղապետարանը գումար է հատկացրել այդ սարքավորումները ձեռք բերելու համար:Ավարտական դասարանների տարեվերջյան էքսկուրսիաների համար ամեն տարի գյուղապետարանը միջոցներ է հատկացրել:

Խոշորացված համայնքների ստեղծումից հետո ևս դպրոցի և համայնքապետարանի կապը պահպանվում է :Մշակութային միջոցառումներին

մասնակցելու համար դպրոցը համայնքապետարանից միշտ հրավերներ է ստանում: Գյուղի մշակույթի տանը կազմակերպվում են կինոդիտումներ, գրողներին և մշակույթի գործիչներին նվիրված ցուցադրություններ, որի մշտական հյուրն է դպրոցը: Դպրոցն ակտիվորեն է մասնակցում համայնքում իրականացվող շաբաթօրյակներին:

Ծնողական համայնքի մասնակցությունը դպրոցի առօրյային ևս շատ կարևոր է: Յուրաքանչյուր դասարան ունի իր ծնողական խորհուրդը, իսկ բոլոր դասարանների խորհուրդների նախագահները միասին կազմում են դպրոցի ծնողական խորհուրդը:Դպրոցի ծնողական խորհուրդն ունի 9 անդամ:Ծնողներից շատերը մշտական կամավորական հաղորդակցության մեջ են դպրոցի հետ:Սակայն կան ծնողներ,ովքեր դպրոց են այցելում միայն ծնողական ժողովների ժամանակ կամ նույնիսկ ժողովներին չեն մասնակցում:Դասղեկները և աջակցող թիմը մշտական կապի մեջ են բոլոր ծնողների հետ: Որոշ ծնողներ շատ մեծ նախաձեռնողականություն են ցուցաբերում միջոցառումների կազմակերպմանն օժանդակելու հարցում:

Ծնողները երբեմն դասալսումների են մասնակցում, կիսվում իրենց մտահոգությունների մասին:Առանձին դեպքեր են եղել, երբ ծնողները մասնակցել են դպրոցի վերանորոգման աշխատանքներին: Ճաշարանի վերանորոգման աշխատանքներն ամբողջությամբ կատարեցին ծնողները,իսկ ուսուցիչներն ու բարձր դասարանների աշակերտները նրանց օգնեցին: Ամեն տարի ծնողները ներկում են դասասենյակների հատակը:

Կրթության կառավարման մարմիններ

Արտենիի հիմնական դպրոցը սերտորեն համագործակցում է ԿԳՄՍ նախարարության, լիազորված մարմնի (ՀՀ Արագածոտնի մարզպետարան,) համայնքապետարանի կրթության վարչության, ԿՁՆԱԿ հիմնադրամի, ԳԹԿ-ի, Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, ոստիկանության Թալինի բաժնի, ԱԻՆ-ի և այլ շահառու կազմակերպությունների հետ, կատարում լիազոր մարմնի օրենքին չհակասող հրամաններն ու կարգադրությունները:

Ուժեղ կողմ	**Թույլ կողմ**
Ծնողների և համայնքի սերտ համագործակցությունը դպրոցի հետ	Կան ծնողներ,ովքեր անտարբեր են երեխայի կրթության և առաջադիմության նկատմամբ
Հաճախ ծնողները կամավորականության սկզբունքով են առաջարկում իրենց աջակցությունը	Աշխատանքի բերումով կամ այլ պատճառներով ոչ բոլոր ծնողներն են կամավորականություն ցուցաբերում:

դպրոցին	
Ծնողների մեծ մասը աջակցում է երեխային սովորելու գործընթացում	Կան ծնողներ,ովքեր չեն կարողանում օգնել երեխային սովորելու գործընթացում:
Ծնողական ժողովներում ծնողների աջակցությունը դպրոցի նախաձեռնություններին և որոշումներին	Ոչ բոլոր ծնողներն են կանոնավոր մասնակցում ծնողական ժողովներին
Ծնողների մի մասը ցանկություն է հայտնում կատարել դասալսումներ:	Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին ծնողների կողմից ցուցաբերվող օգնության սակավություն:
Դպրոցի համագործակցությունը համայնքի հետ	
Դպրոցի համագործակցությունը կառավարման մարմինների հետ	
Ոստիկանության տեսուչների կողմից պարբերաբար դպրոցում անցկացվում են դասախոսություններ և զրույցներ ալկոհոլի,թմրամիջոցների,հոգեմետ միջոցների օգտագործման հետևանքների մասին:	
Դասղեկների և ոստիկանության տեսուչների կողմից անցկացվում են զրույցներ և քննարկումներ՝ նվիրված բռնությունների,հոգեբանական և ֆիզիկական ճնշման բացառմանը:	
Դպրոցում երբևէ չեն գրանցվել բռնության և մարմնական վնասվաքներ հասցնելու դեպքեր:	
Ծնողներից շատերն օգտվում են http://ktak.am, http://www.armedu.am, http://lib.armedu.am կայքերից	

Տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ կապերն ավելի զարգացնելուն ուղղված միջոցառումներ

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ

Դպրոցի գործունեությունն ավելի զարգացնելու համար ավելի սերտացնել կապերը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ:	1.Մշակել համատեղ ծրագրեր տեղական ինքնակառավարման մարմինների հետ:	Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ,կազմել ծրագրեր,կազմել ժամանակացույց և իրականացնել ծրագրերը:	Հնարավորությունները մեծ են:Ռիսկեր չկան:Միայն հարկավոր է համատեղ կերպով կազմել ժամանակացույց և առաջնորդվել դրանով:	Տնօրեն Վարչական տնտեսական համակարգող	2023-2028
	2. Ներդպրոցական կյանքին ծնողների ակտիվ մասնակցությունը ապահովելու համար նրանց ընդգրկել կազմակերպվող էքսկուրսիաների մեջ,նրանց համար կազմակերպ	Ակտիվ աշխատանք տանել ծնողական համայնքի հետ,խթանել նրանց հետաքրքրությունները և ավելի ակտիվացնել համագործակցությունը դպրոցի հետ:	Ծնողների մի մասի քիչ մոտիվացված լինելը:	Տնօրեն Ուսումնական գծով տնօրենի տեղակալ ԿԱԴԱՀ դասղեկներ	2023-2028 թթ

	ել սեմինարներ և դասախոսություններ հմուտ մանկավարժների և հոգեբանների կողմից				
	3.Շահառու այլ կազմակերպությունների /ԱԻՆ, ոստիկանություն և այլն/ հետ կազմակերպել համատեղ միջոցառումներ՝ դասախոսություններ,զրույցներ,պայմանական տագնապի ազդարարման միջոցառումներ և այլն:	Շահառու կազմակերպությունների հետ կազմել աշխատանքային պլան և ժամանակացույց և ըստ դրա իրականացնել ծրագրերը:	Ռիսկեր չկան,այս աշխատանքը ամեն տարի կատարվում է:	Տնօրեն, ԱԻՆ,ոստիկանության տեսուչ	2023-2028 թթ

Աշակերտական խորհուրդ

Դպրոցի աշակերտական խորհուրդն ունի 8 անդամ;Դրանք 6-9-րդ դասարանների աշակերտներն են:Նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են նաև 5-րդ դասարանի աշակերտները: Ամեն ուսումնական տարվա առաջին շաբաթվա ընթացքում 6-9-րդ դասարանների աշակերտական ժողովներում տեղի է ունենում դասարանական խորհրդի ընտրություն, որի հիման վրա ձևավորվում է

դպրոցական խորհուրդը: Աշակերտական խորհուրդն աշխատում է ժողովրդավարական սկզբունքներով և ակտիվ մասնակցություն ունի ներդպրոցական կյանքին: Նրանք հատկապես սիրում են միջոցառումներ կազմակերպել, մասնակցել շաբաթօրյակներին, դպրոցի տարածքի և շրջակայքի մաքրությանը և բարեկարգմանը, մասնակցել սպորտային մրցումներին:

Վերջին երեք տարում սովորողների առաջարկած կամ կազմակերպած միջոցառումները հիմնականում նվիրված են դպրոցի զոհված շրջանավարտներին: Աշակերտները սիրում են նաև գրողների ստեղծագործություններին նվիրված թեմատիկ միջոցառումները:

Երկու տարի առաջ աշակերտական խորհուրդը որոշեց այցելել գյուղում բնակվող միայնակ ծերերին և պարզել նրանց կարիքները: Աշակերտներին օգնում էր <<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամի սոցիալական մանկավարժը: Նրանք այցելեցին տարեցներին և որոշեցին օգնել նրանց տան բարեկարգման և մաքրության հաստատման հարցում: Տարեց արտենցիների և երեխաների միջև ջերմ հարաբերություններ հաստատվեցին:

Դպրոցի նախկին շրջանավարտները ևս պահպանում են կապը դպրոցի հետ:Հինգ տարի առաջ « Հայաստանի մանուկներ» հիմնադրամի միջոցներով դպրոցում ստեղծվեց ամառային ճամբար,որի խմբակները վարում էին դպրոցի նախկին շրջանավարտները:Մեկ ամիս շարունակ երեխաները մասնակցում էին կերպարվեստի,քանդակագործության,բատիկի,պապյե-մաշյե,ֆուրշեթի և սեղանի ձևավորման խմբակներին:Նրանց աշխատանքները այժմ էլ են ցուցադրվում դպրոցի միջանցքում: Այժմ էլ մեր շրջանավարտներից մեկը ազատ ժամանակ գալիս և աշակերտների համար գրաֆիկական դիզայնի պարապմունքներ է վարում: Մեկ ուրիշը եկավ դպրոց և առաջարկեց շաբաթ և կիրակի օրերին անգլերենի անվճար պարապմունքներ անցկացնել սովորողների հետ:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Աշակերտական խորհուրդը գործում է ժողովրդավարական սկզբունքներվ:	Քիչ են գրքեր կարդում:
Նրանց առաջարկությունները արտացոլում են սովորողների կարիքները:	Ակտիվորեն չեն մասնակցում օլիմպիադաներին
Խորհրդում տիրում է համերաշխության և փոխադարձ օգնության մթնոլորտ:	Թեմատիկ գրավոր ախատանքներից ցածր արդյունքներ ցուցաբերողների մեծ թիվ:
Աշակերտներն ակտիվորեն մասնակցում են համայնքային միջոցառումներին,մշակույթի տանն	Գյուղի տարեցներին օգնելու միջոցառումն այլևս չի գործում:Կարելի է խրախուսել սովորողներին՝

անցկացվող քննարկումներին,ֆիլմերի դիտումներին:	շարունակել այդ նախաձեռնությունը:
Ակտիվորեն մասնակցում կամ իրենք են նախաձեռնում ներդպրոցական միջոցառումներ:	
Դպրոցում չկան անառողջ հարաբերություններ սովորողների և ուսուցիչների միջև:	
Դպրոցի շրջանավարտները սերտ կապեր են պահպանում դպրոցի հետ:	

Աշակերտական համակազմ

Դպրոցում սովորում է 103 աշակերտ, որից՝ 45 աղջիկ և 58 տղա: Վերջին 4 տարիների ընթացքում մեծացել է դպրոց դիմողների թիվը և հիմա տարրական դպրոցում սովորում է 57 աշակերտ, իսկ միջին դպրոցում՝ 46 :

Սեռերի հավասարության գործակիցը (աղջիկների ընդհանուր թվի հարաբերությունը տղաների ընդհանուր թվին) 0.77 է: Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը 2 է:

Ապահովված է հավասարությունը ԿԱՊԿ ունեցող աշակերտների, ազգային փոքրամասնությունների և մյուս աշակերտների միջև: Դպրոցում սովորում է 2 ԿԱՊԿ ունեցող և 7 եզդի աշակերտ:Նրանք լիարժեք կերպով ընդգրկված են կրթական գործընթացների մեջ: Դպրոցում գործում է եզդիերեն լեզվի խմբակ: Տնօրենությունը խթանում է աշակերտների նախաձեռնողականությունը,ամեն կերպ նպաստում դրանց իրականացմանը:

Դպրոցում Հայաստանի մանուկներ հիմնադրամի միջոցներով գործում է «Հետաքրքրաշարժ մաթեմատիկա» խմբակը:

Տարրական դասարանների 57 աշակերտ տաք սնունդ է ստանում դպրոցում:

Դպրոցի կողմից սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին տրամադրվում է 27000 դրամ դասագրքերի վարձավճար: ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ աշխատում է բազմամասնագիտական թիմը:

Բնագիտամաթեմատիկական առարաների գծով տղաների և աղջիկների առաջադիմությունը, ըստ հաստատության 2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվության, ներկայանում է հետևյալ կերպ.

Առարկա	Տղաներ	Աղջիկներ
Ֆիզիկա	6	7.1
Քիմիա	6.8	7.6
Մաթեմատիկա	7	7.7
Կենսաբանություն	6.1	7
Աշխարհագրություն	7	7

Աղյուսակից երևում է,որ աղջիկներն ունեն մոտ 1 միավորով ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Պատճառը աղջիկների ավելի բարձր պարտաճանաչության մակարդակն է: Աշխարհագրությունից ստացած միավորները հավասար են:

Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը 27 է,որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 22,2 տոկոսը և բաշխվել է հետևյալ կերպ.

(հաշվարկը կատարվել է 2022-2023 ուսումնական տարվա տվյալների հիման վրա)

Տարրական դպրոց	Հիմնական դպրոց
23 աշակերտ	4
85,2%	14,8%

Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը 10 է,որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 10.3 % և բաշխվել է հետևյալ կերպ.

Տարրական դպրոց	Հիմնական դպրոց
2 աշակերտ	8
20%	80%

Առաջադիմության միջին մակարդակ ունի 60 աշակերտ,որը կազմում է սովորողների ընդհանուր թվի 61.85%:

Աղյուսակից երևում է,որ աշակերտների առաջադիմությունը բարձր է տարրական դպրոցում, իսկ հիմնական դպրոցում աշակերտների սովորելու մոտիվացիան ցածր է: Հաստատության սովորողների առաջադիմության ցուցանիշների մեջ ամենամեծ բաժինն ունեն 6-7 գնահատական ունեցողները:

Աշակերտների շրջանում կատարված հարցումներից պարզ դարձավ, որ հիմնական դպրոցում ծնողները ևս քիչ ուշադրություն են հատկացնում իրենց երեխաների դասապատրաստման վերահսկողությանը: Ծնողների շրջանում կատարված

հարցումներից պարզ դարձավ,որ շատ ծնողների համար միջին դասարանների ծրագրային նյութը բարդ է ,որի պատճառով իրենց մոտ նույնպես կորում է երեխայի դասապատրաստումը վերահսկելու մոտիվացիան: Բացի այդ, միջին դասարաններում սովորողների մոտ նոր հետաքրքրություններ են ձևավորվում, որի պատճառով մարում է հետաքրքրությունը դասապատրաստման նկատմամբ: Ծնողներն առաջարկեցին միջին դասարաններում իրենց երեխաներին ընդգրկել երկարօրյա խմբերում:

Դպրոցում 2022-2023 ուսումնական տարում չեն եղել երկտարեցիներ:Չկան նաև կրկնուսույցների մոտ պարապող սովորողներ:

4-րդ և 9-րդ դասարաններում հիմնական առարկաներից ստացած տարեվերջյան և ավարտական քննությունների գնահատականների աղյուսակ/ վերցված է դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունից/.

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Տարեկան գնահատականների միջինը		Ավարտական քննությունների կամ գիտելիքների ստուգման միջին գնահատականը		Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը 2021-2022 ուստարվա համեմատ	Քննությունների միջին միավորների աճի տոկոսը 2021-2022 ուստարվա համեմատ
	4-րդ դաս	9-րդ դաս	4-րդ դաս	9-րդ դաս	4-րդ դաս	9-րդ դաս	9-րդ դաս	
Հայոց լեզու/	6	7	9	6	9	14	0.1%	
Մաթեմատիկա	6	7	9	7	9	15		9.3%
Հայոց պատմ		7		7		15		9%
Ֆիզիկա		7		7		15		
Աշխարհագ.		7		7		15		անփոփոխ
Ռ. լեզու	6	7	9	8		19	0.1%	
Անգլերեն	6	7	9	8		15		8.4%
Ֆիզկուլտուրա	6	7	9	9		9		
Կենսաբա		7		7		15		

նություն								
Քիմիա		7		7				
Գրականություն		7		7		15		9%
ՆԶՊ		7		7				
Հասարակագիտ		7		8				
Համ պատմ		7		7				
Ինֆորմատիկա		7		8				

Դիտարկենք աղյուսակն ըստ կրթական աստիճանների:

4-րդ դասարանում բոլոր 6 աշակերտները բոլոր առարկաներից ստացել են տարեկան ‘9’ գնահատական: ‘Մայրենի’ և ‘Մաթեմատիկա’ առարկաների գիտելիքների ստուգման արդյունքները ևս նույնն են:Դա ուրախացնող հանգամանք է և հուսանք, որ միջին դասարաններում այդ արդյունքները կպահպանվեն:

9-րդ դասարանում տարեկան և քննական գնահատականները համեմատելիս տեսնում ենք,որ սովորողները ,ընդհանուր առմամբ,պահպանել են տարեկան գնահատականները՝ հավաքելով փոքր ինչ ավելի բարձր միավորներ,:Միայն ռուսաց լեզվից ստացած քննական գնահատականներն են ավելի բարձր,քան տարեկան գնահատականները: Հարցումը ցույց տվեց,որ ռուսաց լեզվի քննությանը մասնակցել է մեկ աշակերտ,որը լավ է պատրաստվել քննությանը:

Աղյուսակը ցույց է տալիս,որ 9-րդ դասարանում տարեկան գնահատականները տատանվում են 7-ի և 8-ի միջև:Հայոց լեզվի միջին տարեկան գնահատականը 6 է:

Նախորդ՝ 2021-2022 ուսումնական տարվա արդյունքների հետ համեմատած հայոց և ռուսաց լեզուների տարեկան միջին գնահատականները նվազել են 0.1 %-ով:Աշխարհագրության միջին տարեկան գնահատականները մնացել են անփոփոխ,մյուս դիտարկված առարկաների միջին գնահատականները բարձրացել են:

Դպրոցն ավարտել է 7 աշակերտ, որից երկուսն ընդունվել են քոլեջներ,իսկ հինգը ուսումը շարունակում է միջնակարգ դպրոցում:

Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողներ չկան:

Դպրոցի զարգացմանը աշակերտական համակազմի մասնակցությունը խթանելուն ուղղված միջոցառումներ

Նպատակը	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման	Ռիսկերը	Պատասխանա	Ժամկետնե

		գրավականները		տուներ	ր
1.Ակտիվացնել աշակերտական համակազմը և նրա մասնակցությունը ներդպրոցական և ներհամայնքային կյանքին:	1.Խրախուսել ցանկացած նախաձեռնություն,որը իրականացվում է սովորողների կողմից:	1. խրախուսում՝ դա կարող է լինել գովասանագրերի, մրցանակների, խրախուսական խոսքերի և այլ միջոցներով:	Աշակերտները պետք է իմանան,որ բոլորն ունեն հավասար իրավունքներ:Այդ իրավունքներն իրականացնելիս պետք է պահպանել ներքին կարգապահական կանոնները և հարգել մյուսների իրավունքները	ԿԴԱՀ ԴԱԿ դասղեկներ	Մշտապես
2.Մոտիվացնել աշակերտների հետաքրքրությունը դեպի կրթությունը:	2.Ավելի ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը:	Կարևոր է նաև սովորողների իրավունքների պաշտպանության և ներքին կարգապահական կանոնների պահանջների կատարման մասին իրազեկումը:		ԿԱԴԱՀ ԴԱԿ դասղեկներ	Մշտապես
	Երկարօրյա պարապմունքների,խմբակների,նախագծային աշխատանքների շնորհիվ ձգտել բարձրացնել հետ մնացող սովորողների	Անհատական բաղադրիչներից դասաժամեր հատկացնել երկարօրյա ուսուցմանը,խմբակների կազմակերպմանը,նախագծային աշխատանքների կատարմանը:	Ռիսկեր չկան,այս ախատանքները նախատեսվում են ուսումնական պլանով:	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ,ԿԱԴԱՀ,մեթոդական միավոր	2023-2028 թթ

	կրթական հետաքրքրությունները			ումների նախագահներ	

Օգտագործվող ՏՀՏ և այլ նորարարական տեխնոլոգիաներ

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դարձել է չափազանց կարևոր:Դրանք մեծ հնարավորություններ են բացում կրթությունն ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու,աշակերտի հետաքրքրությունը բորբոքելու,ստեղծագործական մտածողությունը զարգացնելու գործում:Համակարգչի,էլեկտրոնային գրատախտակի,պլանշետի,սմարթֆոնի օգտագործումը հեշտացնում է թեմայի ուսուցումը,այդ թեմայի վերաբերյալ համացանցից նյութեր գտնելու մեծ հնարավորություններ է տալիս,աշակերտների հետաքրքրությունն է խթանում և օգնում է ավելի հեշտացնել նյութի ուսուցումը:Այն հնարավորություն է տալիս աշակերտին որոնել բազմատեսակ ինֆորմացիա թեմայի վերաբերյալ, զարգացնում է սովորողի ինքնուրույն մտածողությունը,վերլուծելու կարողությունները,օգնում է աշակերտների կողմից թեմայի ավելի համակողմանի և խորը տիրապետմանը:ՏՀՏ հնարավորություն են ստեղծում օգտվել մի շարք հարթակներից և դասը դարձնել ավելի արդյունավետ:Այդ հարթակներն են Kahoot,Padlet,Quizizz,Playpozit,Learning Apps,Google forms,Socrative և այլն:

Դպրոցում գործում է <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա,ուր հաճախում են 6-9-րդ դասարանների սովորողները: Լաբորատորիան համայնքային է և այստեղ հաճախում են նաև Արտենիի միջնակարգ դպրոցի սովորողները:

2020-2022 թվականներին <<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամի օժանդակությամբ դպրոցում գործել է ինժեներաճարտարագիտական խմբակ՝ 3-5-րդ դասարանների աշակերտների համար:Այստեղ երեխաները սովորում էին ծրագրեր կազմել,հաշվարկներ կատարել,կոնստրուկցիաներ ստեղծել:Բոլորը մեծ խանդավառությամբ էին մասնակցում խմբակի աշխատանքներին:

Սակայն դպրոցը հագեցած չէ համակարգիչներով և այլ ՏՀՏ սարքերով:Դպրոցն ունի 3 գործող համակարգիչ, 1 նոթբուք,1 էլեկտրոնային գրատախտակ, 3 պրոյեկտոր,2 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք:Համակարգիչների պակասը շատ է խոչնդոտում ՏՀՏ տեխնոլոգիոների կիրառմանը:Դպրոցի ինտերնետային կապը ևս թույլ է:Հաճախ հաղորդիչ կայանում խափանումներ են առաջանում և դպրոցը համացանցից օգտվելու հնարավորությունից զրկվում է:

Դպրոցի համար ՏՀՏ հագեցվածության խնդիրն առաջնահերթ է և անհրաժեշտ է գտնել ռեսուրսներ այդ խնդրին արագ լուծում տալու համար:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցում կան ՏՀՏ վերապատրաստում անցած 4 ուսուցիչներ,ովքեր կարող են մանկավարժական համակազմը վերապատրաստել:Դա լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի պահանջի:	Համակարգիչների փոքր քանակը դժվարություններ է ստեղծում և աշխատանքում,և վերապատրաստման հարցում:
Բոլոր ուսուցիչները տիրապետում են ՏՀՏ գործիքների և հարթակների օգտագործմանը սմարթֆոնով:	Ուսուցիչները հաճախ հնարավորություն չեն ունենում համակարգիչները օգտագործել դասի ընթացքում,քանի որ այդ պահին մեկ ուրիշ առարկայի ուսուցիչ է այն օգտագործում:
Դպրոցը ձեռք է բերել էլեկտրոնային գրատախտակ:	1 էլեկտրոնային գրատախտակը չի կարող բավարարել դպրոցի կարիքները:
Կան աշակերտներ,ովքեր բավականին վարժ են տիրապետում ՏՀՏ գործիքներին:	Ինտերնետային կապը թույլ է:Անհրաժեշտ է ձեռք բերել լրացուցիչ կապի միջոցներ:
Արմաթ լաբորատորիայի աշխատանքներին մասնակցող աշակերտները և ինժեներաճարտարագիտական խմբակին հաճախած աշակերտները վարժ կերպով կարողանում են օգտվել համակարգչից,նյութեր որոնել և սովորեցնել իրենց ընկերներին:	
Ուսուցիչներն օգտվում են կրթական կայքերից,վերցնում անհրաժեշտ նյութերը,տեղադրում թեմատիկ պլանները,լրացնում էլեկտրոնային մատյանը	Կրթական էլեկտրոնային հարթակները քիչ են օգտագործվում ուսուցիչների կողմից: հարթակները

Դպրոցի զարգացմանը ՏՀՏ տեխնոլոգիաների օգտագործումը խթանելու միջոցառումներ

Նպատակները	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
Հասնել ուսուցիչների և	1.Դպրոցում կազմակերպել	Վերապատրաստումը կազմակերպել ՏՀՏ վերապատրաստում	Ռիսկեր չկան,ֆինանսական	Տնօրեն ՏՀՏ վերապ	2023-2024 թթ

աշակերտների կողմից ՏՀՏ գործիքների և հարթակների օգտագործման բարձր ցուցանիշների,որը կապահովի կրթության բարձր որակ:	ուսուցիչների ,ապա նաև աշակերտների վերապատրաստում:	անցած , ՏՀՏ գործիքներին տիրապետող ուսուցիչների կողմից:Դրա համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվի:	միջոցներ չեն պահանջվում	ատրաստում անցած ուսուցիչներ	
	2.Դպրոցի բյուջեն կազմելիս նախատեսել միջոցներ՝ համակարգիչներ ձեռք բերելու նպատակով:	Աշակերտների վերապատրաստմանը կօգնեն «Արմաթ» ին-ժեներական լաբորատորիա և ինժեներաճարտարագիտական խմբակ հաճախած սովորողները: Դա ևս շատ ժամանակ չի պահանջի:	Ռիսկեր չկան,ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Տնօրեն ԿԱԴԱՀ ԴԱԿ Ուսուցիչներ,սովորողներ	2023-2024 թթ
		Դիմել «Հայաստանի մանուկներ» հիմնադրամին՝ դպրոցում ինժեներաճարտարագիտական խմբակի աշխատանքները շարունակելու համար:	Կարող են մերժել	Տնօրեն	2023-2028 թթ
		Համակարգիչներ ձեռք բերելու համար կարելի է դիմել լիազոր մարմնին՝ լրացուցիչ գումար հատկացնելու համար:	Ֆինանսական միջոցների պակասը	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող	2023-2028

Ներառական կրթության և հավասարության ապահովում

Ուսումնական հաստատությունում կրթության հիմքում ընկած են ներառականու թյունն ու հավասարությունը: Սրանք մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներն են,որոնք դրված են դպրոցի կառավարման և աշխատանքի հիմքում:Բոլոր երեխաներն ունեն պարտադիր և անվճար կրթության իրավունք:

Դպրոցը 2017 թվականից սկսել է իրականացնել ներառական կրթություն: Վկայագրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 15 աշակերտ:Ձևավորվել է բազմամասնագիտական թիմ՝ կազմված հոգեբանից, հատուկ մանկավարժից, սոցիալական մանկավարժից,ուսուցչի օգնականից: Այժմ դպրոցում սովորում է ԿԱՊԿ ունեցող երկու աշակերտ,որը կազմում է աշակերտների ընդհանուր թվի 1.9 % : Մյուս աշակերտներն ավարտել են դպրոցը:

2023 թվականի սեպտեմբերի 1-ից բազմամասնագիտական թիմը կրճատվել է,պահպանվել են հոգեբանի և ուսուցչի օգնականի հաստիքները: Դպրոցը համագործակցում է Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ,որի աշխատակիցները, ըստ սովորողների կարիքի, այցելում են դպրոց և աշխատում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ:

Դպրոցում ստեղծված է հանդուրժողականության և բարյացակամության մթնոլորտ,սովորողները հավասար կերպով են հարաբերվում ազգային փոքրամասնության պատկանող ,ԿԱՊԿ ունեցող և մյուս երեխաների հետ: Ծնողները խտրական վերաբերմունք չեն դրսևորում ԿԱՊԿ ունեցող երեխաների և ազգային փոքրամասնության պատկանող երեխաների նկատմամբ:

Հաստատությունը կարևորում է իր սաների և անձնակազմի առողջությունը: Այստեղ գործում է խիստ հսկողություն սանիտարահիգիենիկ նորմերի և ներքին կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հաստատության գործունեության հիմքում դրված է ներառականությունը:	Ազատ սենյակ չլինելու պատճառով դպրոցը չունի ռեսուրս –սենյակ:
Ներառական կրթություն իրականացնելու համար հաստատության բոլոր ուսուցիչներն անցել են վերապատրաստումներ:	Խելացի հարմարեցումներն ամբողջությամբ իրականացնելու համար ֆինանսական միջոցների պակաս:
Հաստատության փոխտնօրեններից մեկն ունի ներառական կրթության իրականացման համակարգման գործառույթ:	
Դպրոցում պարբերաբար իրականացվում են երեխայի իրավունքներին նվիրված միջոցառումներ:	

Դպրոցի աստիճանահարթակի մի հատվածում կառուցվել է թեքահարթակ և ապահովվել է ֆիզիկական մատչելիություն հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող անձանց համար:	Հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող անձինք երկրորդ հարկ բարձրանալ չեն կարող:
Սանհանգույցներից մեկում տեղադրված է բռնակ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:	Այլ հարմարեցումներ չկան:
Դպրոցն ունի հոգեբան և ուսուցչի օգնական:	
Դպրոցը համագործակցում է Աշտարակի ՏՄԱԿ-ի հետ:	
Դպրոցում առկա են ուսումնամեթոդական նյութեր ներառական կրթության իրականացման համար:	Այ նյութերը համալրման կարիք ունեն:
Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող կարծրատիպերը:	
Հաստատությունում սովորում է 7 եզդի աշակերտ,որոնք ընդգրկված են եզդիերեն լեզվի խմբակում:	

Ներառական կրթությանը և հավասարության ապահովմանը միտված միջոցառումներ

Նպատակները	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
1.Դպրոցում աշխատանքները կազմակերպել ներառականության և հավասարության պահպանման	Դպրոցի աշխատանքները կազմակերպելիս կամ պլանավորելիս հարցը քննարկել կառավարման խորհրդում,խորհրդակցական մարմիններում	Աշխատանքները պլանավորելիս նախօրոք հարցերը քննարկել կառավարման և խորհրդակցական մարմիններում,կազմել ժամանակացույց	Ռիսկեր չկան,ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, ԿԱԴԱՀ ԴԱԿ	2023-2028 թթ

սկզբունքով					
	2.Հաշվի առնել բոլոր շահառու խմբերի կարծիքը		Ռիսկեր չկան,ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, ԿԱԴԱՀ ԴԱԿ	2023-2028 թթ
	Շարունակել դպրոցի ֆիզիկական միջավայրի հարմարեցումը ներառականության պահանջներին:	Մարզի վերանորոգման ենթակա ուսումնական հաստատությունների ցուցակում գտնվելը	Ֆինանսական միջոցների սղության պատճառով վերանորոգումների հետաձգումը	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2023-2028 թթ
	Ապահովել հավասար պայմաններ ԿԱՊԿ ունեցող սովորողների և ազգային փոքրամասնությունների համար:	Ներառականության և հավասարության հարցերը պահել ուշադրության կենտրոնում:	Ռիսկեր չկան,ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, ԿԱԴԱՀ ԴԱԿ	2023-2028 թթ
	ԱՈՒՊ-ների կազմումը կատարել ժամանակին,ընդգրկել ծնողին,բոլոր պարապող ուսուցիչներին:	Իրականացվում է,պարբերաբար ստուգումներ են իրականացվում վերահսկող կազմակերպությունների կողմից:	Ռիսկեր չկան:	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, ԿԱԴԱՀ ԴԱԿ, ուսուցիչներ	Մշտապես

Չափորոշչային որակին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ներդպրոցական վերահսկողության շնորհիվ ներքին կարգապահական կանոնները պահպանվում են բոլորի կողմից:	Դպրոցում չի իրականացվում աշակերտական հերթապահություն:
Գործում է կառավարման ժողովրդավարական համակարգ	
ՀՊՉ համապատասխան կազմվել են ուսուցիչների թեմատիկ պլանները	Նոր է ներդրվում,անսովոր է և աշխատանքի ընթացքում երբեմն խնդիրներ են առաջանում:
Պլանների կատարումը վերահսկվում է տնօրենության կողմից:	
ՀՊՉ վերապատրաստումներ անցած մանկավարժական համակազմ	Կան չվերապատրաստված ուսուցիչներ,ում վերապատրաստումը պետք է կազմակերպվի հաջորդ փուլի ժամանակ:
Ուսուցիչները լրացնում են էլեկտրոնային մատյանները:	Ուսուցիչների մի մասը մատյանները լրացնում է հին ձևով:
Կատարվում են դասալսումներ,քննարկումներ և վերլուծություններ:	
Յուրաքանչյուր ամիս տեղի է ունենում ԿՁՆԱԿ-ի և վարչական աշխատողների առցանց հանդիպում,որի ժամանակ պարզաբանումներ են արվում:	Երբեմն դժվար է լինում միանալ հանդիպմանը:
Տրվում են հայտորոշիչ առաջադրանքներ:	
Կազմակերպվում են երկարօրյա պարապմունքներ ցածր առաջադիմություն ցուցաբերող սովորողների համար:	
Ձևավորվել են խմբակներ:	
Ուսուցիչները պարբերաբար անցնում են հերթական վերապատրաստումներ:	
Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում դարձել է օրվա հրամայական:	

Չափորոշչային որակին համապատասխան կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Նպատակները	Խնդիրները	Հնարավորությունները և իրականացման գրավականները	Ռիսկերը	Պատասխանատուներ	Ժամկետներ
Դպրոցում ապահովել չափորոշչային որակի կրթություն	Հիմնական կրթական ծրագրերի ավարտին սովորողների մոտ ձևավորել հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան կարողունակություններ և հմտություններ	ՀՊՉ վերապատրաստում անցած մանկավարժական հմուտ համակազմ	ՏՀՏ միջոցների սակավ լինելը	Տնօրեն, ուսումնական գծով տնօրենի տեղակալ,ԿԱԴԱՀ ԴԱԿ	2023-2028 թթ
Ստեղծել հարմարավետ կրթական միջավայր	Հանրակրթական հիմնական ծրագրերի ավարտին շրջանավարտների կողմից ապահովել ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները	Դպրոցի կրթական գործունեության իրականացումը ՀՊՉ պահանջներին համապատասխան	Ռեսուրսների սակավությունը	Տնօրեն, ուսումնական գծով տնօրենի տեղակալ,ԿԱԴԱՀ ԴԱԿ	2023-2028 թթ
Ստեղծել համայնքի կարիքներին համապատասխան կրթօջախ	Աշակերտների մեջ զարգացնել համայնքի զարգացմանը ուղղված գործունեության իրականացում	Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ	Աշակերտների հետաքրքրությունների պակասը	Տնօրեն ԿԱԴԱՀ ԴԱԿ համայնքապետարան	2023-2028 թթ
	Դաստիարակել հայրենասեր,գրագետ,ինքնակազմ	Դպրոցի մանկավարժական համակազմի	Սովորողների մոտ հետաքրքրո	Հաստատության	2023-2028 թթ

	ակերպված,ժողովրդավարական արժեքներն արժևորող,ազգային և համաշխարհային մշակույթը ճանաչող ու գնահատող անհատներ	թիմային և նպատակաուղղված աշխատանք	ւթյունների պակասը	մանկավարժական և վարչական համակազմ	

Ակնկալվող արդյունքներ

Վերջին 29 տարիների ընթացքում աշխատելով այս դպրոցում՝ մեծ ցանկություն և նպատակներ ունեմ իրագործելու ներկայացրածս զարգացման ծրագրի բոլոր դրույթները ի նպաստ դպրոցի և ապագա սերունդների, ըստ այդմ՝

1.Սովորողները ծրագրի ավարտին ապահովված կլինեն հարմարավետ ֆիզիկական միջավայրով,որը կլինի ներառական և հավասարապես հասանելի կլինի բոլորին:

2.Նյութատեխնիկական բազան համալրված կլինի ժամանակի պահանջներին համապատասխան սարքավորումներով և գույքով:

3.Կվարվի գրագետ ֆինանսատնտեսական և իրավական գործունեություն:

4.Դպրոցը կդառնա համայնքի կարիքները սպասարկող,շահառու կազմակերպությունների հետ սերտորեն համագործակցող կրթօջախ:

5.Դպրոցի կառավարման մարմինները կաշխատեն ժողովրդավարական սկզբունքներով:

6.Դպրոցը հայրենիքին կտա ազատ մտածողությամբ,սոցիալապես շրջապատի հետ ներդաշնակ գործող, մշակութային գրագիտություն և ճաշակ ունեցող ինքնակազմակերպված անհատներ: